

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ս. Ս. ԽԱՐԿՈՍՅԱՆ

Անհերքելի իրողություն է, որ սովետական գիտական հաստատություններն ու գիտնականները խոշոր աշխատանք են կատարել մեր ժողովրդի ինչպես քաղաքական ու քաղաքացիական, այնպես էլ սոցիալական ու տնտեսական կյանքի պատմության մի շարք մուժ հարցերը պարզաբանելու ուղղությամբ: Մեր պատմության ֆրոնտի աշխատողները, ունենալով տեսական բարձր մակարդակ, բիտա-հետազոտական աշխատանքի բարձր հմտություն, միաժամանակ երևան են հանել բազմաթիվ փաստական նյութեր այն կամ այն պատմական երևույթի պարզաբանելու և հաստատելու ուղղությամբ:

Սակայն պատմա-բանասիրական շատ հարցեր իրենց լուծումը չեն ստացել, իսկ մի շարք պրոբլեմների վերաբերյալ սովետահայ պատմաբանները, ելնելով մի ընդհանուր մարքս-լենինյան աշխարհայացքից, հանգում են տարբեր կարծիքների:

Այդպիսի կարևոր հարցերից մեկին է նվիրված Վ. Հ. Ռշտունու «Ֆեոդալական հարաբերությունները Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու նախօրյակին» վերտառություն կրող հոդվածը, որը լույս է տեսել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդեսի» 1958 թ. 2-րդ համարում:

Պրոֆ. Վ. Ռշտունին իր հոդվածում արժարժում է երկու շատ էական հարց՝ հողատիրության և ճորտատիրության հարցերը:

Ռշտունին, անդրադառնալով Բ. Մ. Հարությունյանի տվյալներին, գրում է. «Բ. Մ. Հարությունյանը, հիմնվելով ինչպես այլ ուսումնասիրությունների, այնպես էլ իր հետազոտության տվյալների վրա, անում է հետևյալ իրավացի (ընդգծումը մերն է — Ս. Մ.) հետևությունը. «...Մուրադյան կալվածները վաճառվում էին, օտարացվում էին ընդհանրապես կամ լիովին, կամ մաս-մաս... Մուրադյանցնում էր ժողովրդարար և հաճախ մանր մասերի էր բաժանվում: Այս ամենը ցույց է տալիս, որ մուրադարական իրավունքը հիմնվում է հողային սեփականության վրա¹: Այդ նույն տեսակետը ընդունում են նաև Ա. Մ. Մսաջանը և Ի. Պ. Պետրուշևսկին:

Այսպիսով, ըստ այդ հեղինակների, մուրադարական իրավունքը հիմնված է հողի կալվածատիրական սեփականության վրա, որի համար որպես առա-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 20-21:

ցույց ծառայում են՝ ա) մուլերի ժառանգարար անցումը, բ) մուլերի վաճառքը, գ) մուլերի բաժանումը մասերի:

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել, որ «Այս դեպքում խոսքը մեկ կամ մի քանի գյուղերի վրա սեփականության իրավունքի մասին է...»¹:

Բաղմիցս կարելի է հանդիպել փաստերի, երբ որևէ տոհմի ժառանգների մի քանի սերունդներ տիրում են տվյալ գյուղի մուլերին, անկախ այն քանից, թե ինչ ենք հասկանում «մուլը» տերմինի տակ: Արդյո՞ք այս դեպքում մենք զործ ունենք ժառանգման իրավունքի հետ: Այստեղ հարկադրված ենք հարցից փոքր-ինչ շեղվել:

Ռշտունին, բերելով թիուլի մասին Բ. Հարությունյանի այն կարծիքը, թե «ի տարբերություն մուլի՝ թիուլային իրավունքը չէր կարելի վաճառել», իր կողմից լրացնում է. «ավելացնենք մեր կողմից, որ չէր կարելի նաև ժառանգություն թողնել, այն իրեն կանոն ժամանակավոր էր, շատ-շատ ցմահ»²:

Իսկ ինչպե՞ս բացատրել այն փաստերը, երբ տվյալ գյուղի թիուլը մի քանի սերունդ մնում էր նույն տոհմի ձեռքին: Օրինակ, Բեղամյաններին վերաբերող մի փաստաթղթի մեջ կարդում ենք, որ երեսուխ վերջին սարդարը՝ Հուսեյին-խանը վկայում է, թե Բջնի և Բուլբիլիսա գյուղերի թիուլը հարյուր տարուց ավելի է, ինչ պատկանում է այդ տոհմին: Այնուհետև նա ավելացնում է՝ «Մեծ հարգանք տածելով դեպի ձեզ, վերահիշյալ գյուղերը հայ և թուրք բնակչությանը հանդերձ, որպես ժառանգարար ձեզ պատկանող թիուլ, ես էլ եմ ձեզ հանձնում որպես թիուլ»³:

Այս հակասական թվացող հարցին, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ պատասխան է տալիս Ի. Պ. Պետրուշևսկին. «Թիուլի այդ տեսակը... սկզբունքորեն ժառանգական չէր, և այդ հաջորդ սերունդներում պահանջում էր շահական նոր շնորհում»⁴:

Եթե այդ այդպես է, ապա ժառանգման իրավունքի տեսակետից մենք որևէ տարբերություն չենք տեսնում գյուղի մուլերի և թիուլի միջև: Ըստ «Ջամբուխ» տվյալների, չի եղել մի դեպք, երբ թագավորը փոխվելիս կամ նոր կաթողիկոսն աթոռ բարձրանալիս վերջինս չդիմի իշխանությանը՝ փանքի մուլադարական իրավունքը վերահաստատելու համար: Օրինակ, ինչպես հայտնի է, XVIII դ. 20-ական թթ. երևանի երկրամասը նվաճում են օսմանյան թուրքերը: Նրանց տիրապետության 13 տարվա ընթացքում էջմիածնում փոխվում է երեք կաթողիկոս, երեքն էլ դիմում են Օսմանյան կառավարությանը՝ Վաղարշապատ, Օշական և Մաստարա գյուղերի մուլերը էջմիածնի փանքի վրա վերահաստատելու վերաբերյալ, և այդ այն ժամանակ, երբ որևէ այլ հավանորդ չկար այդ գյուղերի մուլերի վրա:

Կարելի է բերել բաղմաթիվ նման փաստեր, որոնք անառարկելիորեն խոսում են այն մասին, որ գյուղի մուլերի ժառանգումը, ճիշտ այնպես, ինչպես և թիուլի ժառանգումը, պահանջում էր իշխանության կողմից վերահաստատում:

¹ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVII—начале XIX вв., Ленинград, 1949, էջ 230—231:

² «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 21:

³ Խ. Հ. Ավդալբեկյան, Հոգային հարդը Արեւելյան Հայաստանում (1801—1917), Երևան, 1959, էջ 41—42:

⁴ Ի. Պ. Պետրուշևսկի, Նշվ. աշխ., էջ 207:

⁵ Տե՛ս «Ջամբուխ», Վաղարշապատ, 1873, էջ 106—108:

Որևէ կասկածից զուրա է, որ Փիլիպոս Աղբակեցու օրոք Վաղարշապատ գյուղը էջմիածնի մուքաղարական գյուղն էր, հետևաբար ըստ Վ. Ռշտունու, Ր. Հարությունյանի և մյուսների կարծիքի, այդ գյուղում «մուքաղարական իրավունքը հիմնված էր հողային սեփականության վրա», ավելի պարզ ասած՝ այդ գյուղի հողային ամբողջ ֆոնդը վանքի մասնավոր սեփականությունն էր կազմում: Մինչևեռ Շահ-Արթուր II-ից ստացած ռազամներից մեկի վերաբերյալ Սիմեոն Երևանցին գրում է. «Վասն որոյ և շահս ռազամ գրէ՝ թէ Ետու զվեղ դանկ մուք գեղջղ էջմիածնի աթոռոյն»¹, իսկ մյուս մասին հաղորդում է՝ «Մեռ ևս հրամայեցաք զի հողքդ այդոքիկ էջմիածնի աթոռոյն լիցին միշտ»²: Այս վերջին հոգևրը այն վարելահողերն էին, որոնք գտնվում էին Վաղարշապատ գյուղի զաշտերում և որոնց մասին Սիմեոն Երևանցին գրում է. «այսոքիկ անդր և հողք ևն ի յանգստանի գեղջս մերոյ»³: Հաջո է առաջանում, ինչպե՞ս հաշտեցնել այս հակասությունը, որ մի կողմից՝ Վաղարշապատի ամբողջ հողային ֆոնդը շահական ռազամով վանքին էր հանձնվում «մասնավոր սեփականության իրավունքով», և, մյուս կողմից՝ նույն շահը նույն վանքին նույն գյուղում նվիրում է «անդր և վարելի հողք»:

Ր. Հարությունյանը ամենայն վստահությամբ հայտարարում է, իսկ Վ. Ռշտունին անվերապահորեն նրա հետ համաձայն է, որ «գյուղական շենքերը գյուղացիների սեփականությունն էին կազմում, և միայն շենքի տակ գտնվող հողը մուքաղար կալվածատիրոջն էր պատկանում»⁴: Բնական է, որ Ր. Հարությունյանի կարծիքով, եթե ոչ այդպիսիները, ապա դոնե այդեղեղերը նույնպես մուքաղարի անկապտելի սեփականությունն էին կազմում: Մինչևեռ, Ալեքսանդր Զուլայեցին մի կողմից վերահաստատել է տալիս, որ Վաղարշապատ գյուղի մուքը էջմիածնինն է, մյուս կողմից այդ նույն կաթողիկոսը իր այդպիսիներից մեկի «ի սահմանակից տեղեացն առեալ մեծացուցանէ և պարսպէ: Զի դորն զրամով զնէ և դորն տիարքն յիշատակ տան սրբոյ Աթոռոյն»⁵: «Ջամբռում» մի այլ տեղ կարդում ենք. «Ի ժամանակս Սահանցուց ի կողմն դոին այդոյ տեղ մի կայր անշէն, որ էր Տեր Մկրտչի որդի Սահակին, զայն տեղին ևս էառ սուրբ աթոռն ձեռամբ վերիկ Ալեքսանին յիսուն դուռուշի»⁶: Հայոց Թառ գյուղը Ամենափրկիչ վանքի մուքաղարական գյուղն էր, մինչևեռ այդ գյուղի հասարակությունը իր մուքաղար վանքին նվիրաբերում է Ռեզանտափ և Ծվանների անունով հողամասերը, իսկ նույն գյուղի գյուղացի Անդրեասը 30 սոմարի հողամաս վաճառում է մուքաղար վանքին. «Մեկ ջրաղացի տեղ և մեկ այդույ տեղ Տեր Հայրապետի դուստր Կենքուն ի Յոշական ծախէ սրբոյ Աթոռոյն... 6000 դրանի»⁷:

Նման փաստեր կարելի է բերել տասնյակներով: Եթե հետևելու լինենք մեր հետազոտողների տեղակետին, ապա կստացվի, որ մուքաղարներն իրենց մասնավոր սեփականությունը կազմող հողերը ոչ միայն պետությունից էին

¹ «Ջամբռ», էջ 104:

² Նույն տեղում, էջ 154:

³ Նույն տեղում:

⁴ Б. М. Арутюнян. Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940, էջ 86:

⁵ «Ջամբռ», էջ 164:

⁶ Նույն տեղում, էջ 167:

⁷ Նույն տեղում, էջ 182:

նվեր ստանում, ալլի գնում և հիշատակ էին ստանում մուքաղարական գյուղերնակիչներին:

Մեզ թվում է, որ այս փաստերը ակնառու ապացույց են, որ մուքաղարական իրավունքը հիմնված չէր հողի մասնավոր սեփականության վրա:

Արդ՝ դառնանք Բ. Հարությունյանի մյուս թեզիսին, որի հետ լիովին համակարծիք է Ռշտունին (ինչպես և մյուս բոլոր հետազոտողները): Ինչպես տեսանք, նա վատահորեն պնդում է, որ մուքալին կալվածները վաճառվում, օտարվում էին ընդհանրապես կա՛մ ամբողջությամբ, կա՛մ մաս-մաս:

Հազիվ թե առարկություն լինի այն մասին, որ մեզ հասած վավերագրերում բազմիցս հանդիպում ենք ինչպես գյուղերի մուլքի, այնպես էլ անհատ մարդկանց պատկանող հողակտոր, արա, տնատեղ, այգետեղ և այլ մուլքերի առքուվաճառքի և ընդհանրապես օտարման: Ինքնին հասկանալի է, որ արտերի, հողամասերի օտարումը չի կարող հիմք ծառայել խոսելու կալվածատիրական հողատիրության մասին: Ուրեմն խոսք կարող է լինել միայն այն դեպքերի մասին, երբ օտարվողը գյուղի մուլքն է: Մենք ամենայն վստահությամբ պնդում ենք, որ գյուղի օտարվող մուլքը հողային ֆոնդի սեփականության հետ ոչ մի առնչություն չունի: Այստեղ առկա է «մուլք» տերմինի բովանդակության ոչ ճիշտ բովանդակում: Ինչպես հայտնի է, այդ ժամանակ մեր երկրում այդ տերմինով արտահայտվում էր երկու իրարից տարբեր բովանդակություն՝ 1) անշարժ գույք, 2) տասանորդ, այսինքն ամբողջ գյուղի բերքի $\frac{1}{10}$ մասը: Հենց մուլքը մասերով (դանդերով) վաճառելը (օտարելը), մեր կարծիքով, ինքնին, ծանրակշիռ ապացույց է, որ խոսքը հողային տարածության մասին չէ: Եվ իրոք, երբ վաճառվողը մուլքի մի մասն է, ապա հողային տարածություն լինելու դեպքում առքուվաճառքի փաստաթղթերում պետք է հիշատակվեն վաճառված մասի սահմանները, մինչդեռ այդպիսի դեպքերում չնայած վաճառվում է մուլքը ոչ ամբողջությամբ, այլ նրա որեկ մասը, փաստաթղթերում հիշատակվում են ամբողջ գյուղի սահմանները: օրինակ, Պետրուշևսկին իր աշխատության մեջ բերում է մի վաճառագիր, ըստ որի երկու բնտանիք Ղուշչի չլուղում ունեին մեկը՝ 1, մյուսը՝ $\frac{1}{2}$ դանդ մուլք: Նրանք իրենց պատկանող մուլքը վաճառում են երրորդ անձնավորությանը: Եթե այդ վաճառված մուլքը հողային տարածություն լիներ, ապա շարիաթի կազմած փաստաթղթում պետք է հիշատակված լինեին վաճառված երկու կտոր հողերի սահմանները: Մինչդեռ առքուվաճառքի փաստաթղթերում հիշատակվում են ամբողջ գյուղի սահմանները: Գրիգոր Մակվեցին Վաղարշապատ գյուղի 6 դանդ մուլքը գնում է մասերով՝ երեք առանձին տերերից. «և ի մեջ երեք դապալայից՝ այսոցիկ՝ զրե՛ գեղօս այս և յատկացուցանե՛ ամենայն սահմանօք և կոպարօք իւրով»¹: Ս. Երևանցին Ծովանիս գյուղի մուլքի մասին մեզ հաղորդում է. «զմէկ և կէս՝ դանդ մուլք գեղջս այսմիկ Բարի որդի Ետկար ոմն ծախէ Համատանցի մուլաջ Իսուֆի որդի Աման-Ալլահին ... յորում սահմանք գեղջս ևս գրեցեալք են...»²: Այնուհետև հիշատակվում են ամբողջ գյուղի սահմանները:

Այս վկայություններից պետք է եզրակացնել, որ նախ՝ վաճառվել են մուլքի մասերը, երկրորդ՝ այդ մասերը ընդգրկում են ամբողջ գյուղը իր չորս սահմաններով: Նստան դեպքում մուլքը երբեք չէր կարող հողային տարածություն լինել:

¹ Տե՛ս Ի. Պ. Պետրուշևսկի, նշվ. աշխ., էջ 235:

² «Ջամբո», էջ 101:

³ Նույն տեղում, էջ 127:

Երբ աղբյուրներում կամ վավերագրերում հանդիպում ենք գյուղի մուլքը դանդերով (հավասար մասերով) օտարելու փաստերի, այդ պե՛սը է հասկանալի րացառական որակն առասանորդը կամ դրա որե՛է մասը տնօրինելու իրավունքի շտարում: Ահա թե ինչու, երբ վաճառվում է գյուղի ոչ միայն ամբողջ մուլքը, այլև դրա որե՛կ մասը, նշվում են ամբողջ գյուղի սահմանները, որովհետև ունեցողն ստացվում էր ամբողջ գյուղից, մի գեպում՝ ամբողջ տասանորդը, մյուս գեպում՝ տասանորդի համապատասխան մասը: Մեր կարծիքով, րացարձակ թյուրիմացության արդյունք է ընդհանրությունը գտած այն կարծիքը, որ իբրև «դանդ» նշանակում է ամեն մի մեծության $\frac{1}{6}$ մասը: Մուլքերը, ինչպիսին էլ որ լինեին, երբևք չէին կարող հաշվվել դանդերով, և մեզ չի հանդիպել մի փաստ, որ որե՛է մուլք (գույք իմաստով) չափված լինի դանդերով: Դանդերով հաշվվում էր մուլքից սպասվող արդյունքը: Օրինակ՝ հողերը չափվում էին տարածական չափերով (խալիսը, սոմար, չվան և այլն), իսկ այդ հողերից սպասվող արդյունքը՝ դանդերով: Եթե այդին, ջրադացք, դինդը և այլն մեկից ավելի տեղ ունեն, ապա դանդով հաշվում էին այդ օբյեկտներից սպասվող արդյունքը, օրինակ՝ ջրադացի շահատը: Ուրեմն դանդն ինքնին ցուցանիշ է ոչ թե ամեն մի մեծության, այլ անհատ մեծության: Իսկ գյուղի հողային ֆոնդը անհայտ մեծություն չէր, ուստի դանդերով հաշվվել չէր կարող:

Այժմ բերենք մի քանի ուղղակի վկայություններ, որ գյուղի վաճառվող և կոտորակվող մուլքը իսկապես տասանորդ էր և ոչ թե հողային տարածություն:

Սիմեոն Երևանցին հաղորդում է. «Արդ՝ այս Գրիգոր կաթողիկոս... զնէ շեշդանկ մուլքն զեղջս այսմիկ (որ է տաւնորդ)»³: Նույն հեղինակը, նախքան արձանագրելը, թե ինչպես են կաթողիկոսները գնել Օշական գյուղի մուլքը մասա մաս, գրում է. «Յադագս Յօշական կոչեցեալ զեղջն, որոյ վեց դանկ մուլքն, ախինճն տաւանորդն է սրբոյ Աթոռոյս, թե որպէս և երբ, ծանուցանի»⁴: Զարարիա Սարկավազը բերում է հետևյալ վիճական արձանագրությունը. «Ես Երևանցի Ավագս և իմ ամուսին Դաստաղույ միաբանեցաք և գնեցաք Ա ստակ մուլք ի Փարպի և տուաք ի դուռն ս. Կարապետիս... Արդ՝ եթե որ ի մերոց կամ յօտարաց... հանել ջանայ զմեր տուեալ տասանորդն, դատի յԱստուծոյ...»⁵:

Նման փաստերը, որոնք աներկղիմի ապացույց են, որ գյուղի վաճառվող մուլքը տասանորդ ստանալու իրավունքն է, կարելի է րազմապատկել: Հարկավ, հաճախ մուլքը տասանորդ լինելու րացատրական մասը րացակայում է: Բայց հարցն ուղղործյամբ քննության առնելիս ճշող մեծամասնությամբ պարզվում է, որ խոսքը րացարձակապես տասանորդի մասին է, մանավանդ երբ հիշատակված է լինում դանդերի քանակը:

Ի. Պ. Պետրուշևսկին, հիմնվելով իր տրամադրության տակ եղած տվյալների վրա, տրամադծորեն հակառակ եզրակացության է հանգում: «Այդ կարգի փաստաթղթերը, — գրում է նա, — ջախջախում են այն փորձերը, որոնք աշխատում են մուլքի վաճառքը րացատրել լոկ որպէս ձեռնարկի րաժնի հանձնումը»:

¹ Տե՛ս «Ջամբո», էջ 188—189:

² Տե՛ս նույն տեղում, գլ. ԺԵ:

³ Նույն տեղում, էջ 100:

⁴ Նույն տեղում, էջ 108:

⁵ Զարարիա Սարկավագ, Պատմութիւն, III, Վաղարշապատ, 1870, էջ 21—22:

⁶ Ի. Պ. Պետրուշևսկի, նշվ. աշխ., էջ 239:

Բաժանական է եանդ առնել Պետրուշեսկու բերած մի քանի փաստարկումներին վրա ցույց տալու համար, որ զրանք խոսում են հենց իր առաջադրած թեզի դեմ:

ա) Սուլեյման շահի 1691 հ. թ. ֆերմանին կցված էջմիածնի վանականների խնդրագրի մեջ կարդում ենք, որ վանքը տիրապետում էր «փոքր թվով կալվածներ, այգիներ և ջրաղացներ, որոնցից մի մասը եկեղեցու վակուֆային գույքն է, մյուս մասը գնված է ոսկով»: Ոսկով գնված հողերը միայն մուլք կարող էին լինել—գրում է Պետրուշեսկին¹: Պետրուշեսկին «ամլյաք» բառը թարգմանել է կալվածներ, այդ բառը «մուլք» բառի հոգնակի ձևն է: «Մուլքեր» տերմինն այստեղ նշանակում է «հողակտորներ», «արտեր», բայց ոչ երբևէ «ֆեոդալական կալվածներ», «գյուղեր»: Դա երևում է նախ այն բանից, որ մուլքեր (ամլյաք) տերմինի հետ գործ են ածվում նաև այգիներ և ջրաղացներ բառերը, երկրորդ՝ այդ մասին ունենք Սիմեոն Երևանցու ուղղակի վկայությունը: «Շահ Սուլեյմանին ուղարկ (ՌԷԼ—1091), որ գրէ ըստ արդայի Յակոբ Կաթողիկոսին ի վերայ Երևանու խանին թէ՛ էջմիածնի մուլքն ու որ բոնու-թեամբ դաւթեալ իցէ, յետս դարձուցանել տայցես: Զի անիծեալ կաղկի Սէֆի-դուլի խանն զոմանս մուլքս Աթոռոյս դաւթեալ է երբեմն»²: Ուրեմն խոսքը այդ խանի կողմից բռնադրաված մուլքերի մասին է: Եթե հարցը վերաբերելիս լինելու վաղարշապատ գյուղի ամբողջ մուլքին, ապա Երևանցին այն կղեւեղեր գյուղի մուլքի վերաբերյալ գլխում: Մինչդեռ այդ մասին նա հիշատակում է ջրի և արտերի վերաբերյալ հատվածներում: «Ձայս Ծովակս խնդրեաց էէզկի Սէֆի-դուլի խանն ի սոյն երանելոյս, և ի յոչ տալն սորա շարացաւ յիշեալ խանն և բաղում շարիս գործեաց ընդ կաթողիկոսին՝ որպես յիշեցաք ի Ժնդուխն ի ճառրս արտորէիցն...»³: Որ խոսքը վերաբերում է ոչ թե վաղարշապատ գյուղի մուլքին, այլ այդ գյուղում վանքի ունեցած արտահամայնական հողերին, բխում է նաև այն բանից, որ մի գյուղի մուլքի մասին կգրվեր եղակի՝ «մուլք» և ոչ թե հոգնակի՝ «ամլյաք»: Այսպիսով, ըստ Պետրուշեսկու բերած վավերագրի, ոսկով գնած այդ մուլքերը էջմիածնի վանքի արտահամայնքային հողերն էին, որ գտնվում էին վաղարշապատ գյուղի գաղտնիքում: Ստացվում է այն պատկերը, ինչ որ ասացինք վերը՝ Բ. Հարությունյանի թեզին վերաբերյալ, այն է՝ ըստ Պետրուշեսկու, վանքը իր սեփականությունը կազմող հողերը ոսկով գնում է գյուղացիներից: Մենք կարծում ենք, որ հիշատակված վկայությունը պարզ ասացույց է, որ վանքը գյուղի հողային ֆոնդի սեփականատերը չէր, այլ տասանորդ մուլքի, այդ պատճառով էլ մուլք-գույքերը (արտեր, այգիներ և այլն) կարող էր գնել ոսկով:

բ) Դենգիուու տոհմից մի կին վաճառում է իր եղբորը՝ իրեն պատկանող գույքը, այն է՝ «Թույ-Քուրջ գյուղի եռեկուսի բաժիններն ու մասերը, բնկուղենիներն ու մյուս ծառերը, ջրաղացը, Թավուշ վարելահաշտը, ջրերը, արոտավայրերն ու մարդագետինները»⁴: Բսկապես, ինչի՞ մասին է վկայում այս վավերագիրը. որ աղ ժամանակ մեր երկրի համար շատ սովորական բան էր այգիներ, ջրաղացներ, հողակտորներ վաճառելը, այդ մասին որեւէ առարկություն չի կարող լինել: Վե՞ն այն մասին է, թե գյուղի վաճառվող մուլքը հողային տարա-

¹ Ի. Պ. Պետրուշեսկի, Նշվ. աշխ., էջ 233—234:

² «Ջամբո», էջ 219:

³ Նույն աղբյուր, էջ 199. հմմտ. էջ 138:

⁴ Ի. Պ. Պետրուշեսկի, Նշվ. աշխ., էջ 139 (ընդգծումը մերն է — Ս. Մ.):

ծովյո՞ւն է արդյո՞ր։ Հենց այդ վավերագիրը, մեր կարծիքով, պարզ խոսում է Պետրուշևսկու գեմի վավերագրում մի կողմից հիշատակվում է, որ վաճառվել են հողերի բաժիններն ու մասերն, ըստ Երևույթին զանգերը, որ պատկանելիս են եղել վաճառողին, մյուս կողմից հիշատակվում է, որ վաճառողին պատկանելիս են եղել նաև Քավուշ վարելահաշար, արոտավայրերն ու մարդագետինները, և այդ բոլորը միևնույն գյուղում։ Եթե այդ բաժիններն ու մասերը Բուլ-Քուրջ գյուղի հողային ֆոնդին վերաբերելիս լինեին, ապա գոնե Քավուշ վարելահաշարը ասանձին չէր հիշատակվի։ Ուրեմն, ըստ վավերագրի բովանդակության՝ վաճառողը վաճառել է այդ գյուղում իրեն պատկանող գույքը և գյուղի ամբողջ հողերից ստացվող սենտայի մասերն ու բաժինները։ Այդ բանում մեզ համոզում է նաև այն, որ մեր երկրին այդ ժամանակ բոլորովին հատուկ չէր գյուղի հողերի ամբողջականության խախտումը։ Համապատասխան միջև բաժանվում էր ո՛չ թե հողը, այլ բերրից ստացված սենտան։ Վերահիշյալ վաճառման օրյեկտ են ծառայել սենտայի մասն ստանալու իրավունքը և գյուղում եղած գույք-մուլերը։

դ) Պետրուշևսկին բերում է Սուլեյման Հասի ուսղամներից մեկում գեանդ-ված մի հին վակուֆնամեի հետևյալ բովանդակությունը։ «Չուխուր Սաադի (Երևան երկրի) ենթակա վայրերից՝ Կարբի Նահիեի Ուշ-Քիլիսա (Վաղարշապատ) գյուղի քեղխուղաները և մելիքները, Երկրագործները, Կերերն ու կիսրարները՝ բոլոր բնակիչները՝ ներկայանալով վեհապանձ շարիաթի դատարանին, կամովին և ամենայն հաճությամբ մշտական վակուֆ և մշտական գույք կտակեցին Ուշ-Քիլիսայի վանքին (էջմիածին)։ Ի սեր Հիսուսի դավանների միության, Չուխուր-Սաադին ենթակա Կարբի Նահիեի Ուշ-Քիլիսա գյուղի վեց զանգը լիովին, բոլոր ենթակա տեղերով և կից օժտավայրերով, նշված ամբողջ գյուղը այդ վայրի ուխտի տիրապետությանը հանձնեցին... որպեսզի խալիֆան տարեց-տարի հիշյալ գյուղի եկամուտները ծախսի այդ ուխտի կարիքների համար...»։ Երևելով այս վավերագիրը, մեր հեղինակը եզրակացնում է. «Այս ակտը դժվար կլինեի բացատրել այլ կերպ, քան գյուղացիների կողմից իրենց ազատությունը և հողը վանքին կոմենդացիա անել»²։ Նախ՝ այստեղ խոսքը «վեց զանգի» մասին է և անձնական ազատության մասին որևէ հիշատակում չկա, ուրե՛մն այստեղ մենք գործ ունենք ոչ թե կոմենդացիայի հետ, այլ միջնադարյան precaria oblata-ի հետ։ Երաջ էականը ներկա գեանդում, իհարկե, այդ չէ։ Երկրորդ՝ ե՞րբ կարող էր գյուղի համայնքը իր ազատությունը և գյուղի մուլը (իմա՝ հողային ֆոնդը) նվիրաբերել վանքին։ Անկասկած՝ միայն այն դեպքում, եթե գյուղացիները մուլը արտադրական չէին, ազատ էին և հողն էլ որևէ սեփականատեր չունեի։ Այդ բանը քաջ գիտակցում է նաև Պետրուշևսկին։ «Մինչև այդ, — գրում է նա, — գյուղական համայնքը, ըստ երևույթին, իր հողին տիրում էր որպես մուլը»։

Հարց է առաջանում, ե՞րբ է տեղի ունեցել այդ ակտը։ Ըստ Պետրուշևսկու՝ 1450 թ.։ Մինչդեռ աշտարակելիորեն հայտնի է, որ այդ ժամանակ Երբիգոր Մակվեցին արդեն գնել էր Վաղարշապատ գյուղի մուլը։ Այդ փաստը հայտնի է նաև Պետրուշևսկու։ Հեռավար Վաղարշապատ գյուղի գյուղացիները, ըստ Պետրուշևսկու կոնցեպցիայի, վանքի ճոշտերն էին, և հողն էլ վանքի մասնա-

¹ Ի. Պ. Պետրուշևսկի, Նշվ. աշխ., էջ 243։

² Նույն տեղում, էջ 246։

³ Նույն տեղում։

վոր սեփականությունն էր: Ել ինչպե՞ս կարող էին գյուղացիները իրենց շունե-
ցած ազատությունն ու մուլքը նվիրարեւել այդ գյուղացիների ու այդ գյուղի
սեփականատիրոջը: Մի՞թե պարզ չէ, որ Պետրուշևսկու մեկնարանությունը
որեւէ հիմք չունի:

Հավանաբար այստեղ խոսքը գյուղից երկրորդ մուլք (սենտա) օտարելու
մասին է: Այդ կոահումը մենք անում ենք՝ ելնելով հետեւյալ նախադրյալներից.
ա) վակուֆ տերմինը միշտ միեւնույն բովանդակությունը չունի: Մուսուլմանա-
կան իրավունքի մասնագետները տարբերում են ամբողջական-անսպաժան
վակուֆ և մասնակի-սպաժանական վակուֆ: Առաջին դեպքում կտակած դուլքը
անվերապահորեն անցնում է կրոնական հաստատությանն ամբողջությամբ,
երկրորդ դեպքում, չնայած վակուֆնամեում հիշատակվում է դուլքը, բայց
կտակողն իրեն է վերապահում հատկացման չափն ու քանակը: Մուսուլմանա-
կան իրավունքի տեսարանները այդ վակուֆը անվանում են սովորուրալին,¹
ի տարբերություն առաջինի, որ անվանում են օբիեակալ: Մենք այստեղ գործ
ունենք սովորութային վակուֆի հետ, որն ավելի լայն չափերով էր տարածված.
այդ երևում է նրանից, որ չնայած հիշատակվում է ամբողջ գյուղը, բայց դանձ-
ման ենթակա է «բահրաչեն»: Բ) Հայտնի է, որ բահրան (կամ բահրաչեն) այն
հնդորդն է, որը դանձվում էր հօգուտ արքունիքի՝ որպես բնդհանուր հարկ-ոեն-
տայի մի մասը: Հասկանալի է, որ գյուղական համայնքը իրավագոր չէր պե-
տական հարկը օտարելու: Մյուս կողմից, գյուղի տասանորդը պատկանում էր
մուլքագար վանքին, ուստի կտակի նյութ չէր կարող ծառայել նաև այդ տա-
սանորդ-մուլքը: Հետևաբար, կտակը բահրաչից և մուլքից դուրս մի բան էր,
հավանաբար երկրորդ տասանորդը, որը միանալով վանքին պատկանող մուլ-
քին, կազմում էր 2 տասանորդ, կամ հնդորդ, որն այն ժամանակ հայտնի էր
բահրա անունով: Ահա ինչու վավերացրում առկա է բահրա տերմինը, որը
այս դեպքում պետական հարկ չէ: Գ) Մուլքագարական գյուղի կողմից երկրորդ
մուլք օտարելու փաստերից հայտնի է չորս դեպք՝ Օչական, Ֆրանկանոց, Բոխե-
նիս և Աստապատ գյուղերի վերաբերյալ:

Ինչ կերպ էլ որ մոտենալու լինենք, վավերացրում դանդ. և բահրաչե տերմին-
ների առկայությունը ինքնին պարզ ցուցանիշ է, որ խոսքը ոենտայի մասին է:

Այսպիսով, ոչ միայն «Ջամբուխ» տվյալներն են խոսում Պետրուշևսկու տե-
սակետի դեմ, այլ հենց իր կողմից բերված փաստերը:

Ինչպես տեսանք, Պետրուշևսկին (ինչպես և մյուս հետազոտողները)
մուլք-տասանորդը համարում են հարկ-ոենտայի մի մասը, իսկ բահրաչն
հնդորդը՝ հարկ-ոենտայի մյուս մասը: Հետևաբար մուլքը և բահրաչեն միե-
նույն հարկ-ոենտայի՝ բահրաչի բաղադրիչ մասերն են: Եթե Պետրուշևսկու այդ
ձիշտ բացատրությունը Կ. Մարքսի բառերով արտահայտելու լինենք, ապա
պետք է ասենք, որ մեր երկրում «ոենտան և հարկը համընկնում են կամ,
ավելի շուտ, այն ժամանակ հողային ոենտայի այս ձևից տարրեր ոչ մի հարկ
չի լինում»: Բայց այդ կարող է դոյություն ունենալ միայն այն դեպքում, եթե
«իրեն հողի սեփականատեր ու միաժամանակ գերիշխող ելնում է ոչ թե հողի
մասնավոր սեփականատերը, այլ պետությունը»: «Բայց այս դեպքում ոչ մի
մասնավոր հողային սեփականություն չկա, կա հողի ինչպես մասնավոր, այն-
պես էլ համայնական տիրապետում և օգտագործում»:

¹ Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մ. 2, էջ 309:

Եթե մեր հեղինակները ընդունում են, որ մեր երկրում ունեւան հարկի չնույթ ուներ, ապա այդ այլ խոսքերով նշանակում է, որ հողի սեփականութիւնը պետական ընույթ ուներ և բացակայում էր հողի մասնավոր սեփականութիւն ինստիտուտը, քանի որ, ըստ Մարքսի ուսմունքի, հողի սեփականութիւնը անտեսական ունիւղալիսն փողալական ունեւան է: Իսկ ընդունել, որ ունեւան հարկի ընույթ ուներ, որ մուլքը հարկ-ունեւալի մի մասն էր, այլ կերպ աւած, տնտեսական ունիւղալիսն հատկեւնել պետական ընույթ, իսկ դրա իրավական արտահայտութիւնը (սեփականութիւն իրավունքը) համարել մասնավոր՝ դեմ է ամեն տրամարանութիւն և նշանակում է իրարից շտարբերել զույգ և սեփականութիւն հասկացողութիւնները, շտարբերել հողի սեփականութիւն իրավունքը հողի տիրակալման իրավունքից:

* * *

Մեր հետազոտողները հողի պետական սեփականութիւնը համարում են տնտեսական, ֆիլիցիա, ոչ իրական: Հողի մասնավոր սեփականութիւնը սահմանափակված էր տեսականորեն, ասում են նրանք:

Մեր կարծիքով, հողի փողալական սեփականութիւնը հարցն արծարծելիս ելակետ պետք է ընդունել այն, որ հողի սեփականութիւնը իրավունքի տնտեսական ունիւղալիսն փողալական ունեւան է: Բոլոր հետազոտողներն անխորտիր համաձայն են, որ ունեւան մեր երկրում հարկի ընույթ ուներ և որ մուլքը հարկ-ունեւալի մի մասն էր: Ուրեմն հողի սեփականութիւնը ունիւղալիս պետք է համարել ոչ թե ունեւալի մի մասը՝ մուլքը, այլ բահրան («բահրալ»՝ մուլք), քանի որ արտադրող դասակարգը այդ ունեւան հարկի ձևով վճարում էր ամբողջութիւնը ու տուանց մնացորդի: Էջմիածնի օրինակով մենք տեսանք, որ տասանորդը շնորհվում էր մուլքադարին: Այնքան, որքան այդ շնորհումը հաճախ վերահաստատվում էր սերնդե-սերունդ, կարելի է ընդունել, որ շնորհումը «տեսական», «ֆիլիցիա» ընույթ ուներ: Բայց դրանից բոլորովին չի բխում, թե մուլքադարական գլուղերի վրա պետական օրգանների կողմից կարգադրութիւններ անելու իրավունքը նույնպէս «տեսական» ու ֆիլիցիա էր: Եթե հարցը սահմանափակվի միայն շնորհումը վերահաստատելու խնդրով, իհարկե, կարելի էր համաձայնել Պետրուշևսկու և Ռշտունու հետ: Բայց բանն այն է, որ հարցը դրանով չի սահմանափակվում: Բ. Ս. Հարութիւնյանը, հակառակ իր ընդհանուր կոնցետրիալի, հարկադրված է ընդունել, որ «հարկ, ունեւալի մուլքադարական մասը այլ բան չէ, քան ընդհանուր ունեւալի որոշ մասը, որը գանձարանը զիջում էր (ժամանակավորապէս կամ ժառանգարար)՝ զանազան անձնավորութիւնների կամ հողեր հաստատութիւնների»¹: Ուրեմն, զոլութիւն ուներ մի ընդհանուր հարկ-ունեւա, որի 2/3 մասը գանձում էր պետութիւնն անմիջականորեն, իսկ 1/3-ը՝ զիջում էր մուլքադարին: Ուրեմն հողի սեփականութիւն տէխնիկական ունիւղալիսն պետական ընույթ ուներ, իսկ եթե մենք, հետեւելով Մարքսին, ընդունում ենք, որ սեփականութիւնը իրավական արտահայտութիւնն էր հողի տնտեսական ունիւղալիս, ապա դրանից ինքնին բխում է, որ մեր երկրում հողի փաստական սեփականատերը պետութիւնն էր: Այս հանգամանքը «տեսական» է, «ֆիլիցիա», թե՛ խիստ փաստական ու գործնական:

¹ Բ. Ս. Հարութիւնյան, Նշվ. աշխ., էջ 18:

Քառյական է թեկուզ հարեանցիորեն թերթիկ «Ջամբուխ» մաղաֆույթյան վերաբերյալ դուրսը, որպեսզի անառարկելիորեն պարզ լինի, որ մուքաղարը (վանքը) պարտավոր էր մուքաղարական դեպի արտահամայնքային հողերում իր ցանածից բահրա-հնգորդ վճարել «երկրի սովորության համաձայն», եթե հատուկ արտոնագրով դրանից ազատված չէր: Ավելին, արտոնագրով նախատեսվածից ավելի տարածություն ցանելու դեպքում, տարրերության համար պետք է հնգորդ վճարեր սովորական կարգով: Հարց է առաջանում, մուքաղարի սեփականատիրական իրավունքը սահմանափակված էր «տեսականս-րեն», թե՞ դործնականորեն:

Այսպիսով, մենք գալիս ենք այն էզրակացության, որ հակառակ վ. Ռշտունու պնդմանը, նսալանին, Հարությունյանին և Պետրուշևսկուն բոլորովին չի հաջողվել դրական ավելանելու ավագուցի, որ մեր երկրում Խուսաստանին միանալու նախօրյակին հողի ֆեոդալական սեփականությունը ոչ թե պետական, այլ մասնավոր կալվածատիրական բնույթ է ունեցել:

* * *

Այժմ անդրադառնանք մուլքը որպես «գրույքային ոռձիկ» լինելու հարցին, որը ամեն պատեհ առիթով կրկնում են մեր հետազոտողները: «Մինչոևույցիոն կեվկասագետների այն պնդումը, որ մուլքը (բացառապես հասկանալով որպես հարկ-ոևնտայի մի մասը) իբր թե ոռձիկի մի տեսակն է պետությունը ծառայելու համար, լիովին անհիմն հայտարարություն է... Մեզ հայտնի չէ և մինչև օրս ոչ ոք չի բերել թեկուզ մեկ փաստաթուղթ, որից երևար, որ մուլքը տիրելը պայմանավորվում էր պետությունը ծառայելով»:

Մեր կարծիքով այստեղ առկա է հարցի պարզ շփոթություն: Մենք ևս այն կարծիքին ենք, որ մուլքը իբրև գույքի տիրապետում գրույքային ոռձիկի հետ որևէ առնչություն չունի: Բայց որ մուլքը, որպես հարկ-ոևնտայի մի մասի հատկացում, ոռձիկի հետ կարող էր կապ ունենալ՝ դրա դեմ առարկությունը հիմնավոր համարել չի կարելի:

Եստանք փաստերին: Մ. Սմբատյանի «Գեղարքունիքում» հրատարակված են Գյուղչայի Մելիք-Շահնաղարյան տոհմին վերաբերող մի շարք շահահան ուղղամենք: Այդ վավերագրերից մեկով Աբրահամ Միրզան Գյուղչայի նահանգի «գլխավարությունը դործոց» հանձնում է Եավթի խան Շափուրին: Ընդգծվում է, որ այդ կառավարիչը ցանքից դանձելու է պետական բնահարկը, իսկ դրամով՝ մեկական բաջաղլու միայն պետության համար. իրեն՝ Շափուրին հատկացվում է 9 գյուղերի մուլքը¹: Այդ նույն շարքից Մելիք-Բեգին տված ուղղամումը գրված է. «Ե թողեալ ենք նմա առնել զիշխանութիւն, զի մի հասցէ պակասութիւն արքունի հասոյթին», իսկ դրա դիմաց մելիքին հատկացվում է 8 գյուղի տասանորդը: Բայց մեզ կարող են առարկել, որ բերված փաստաթղթերում հատկապես նշված չէ «մուլք» տերմինը, չնայած ընդգծվում է պաշտոնավարական ֆունկցիան և դրա հետ կապված մի քանի գյուղի և ոչ թե ամբողջ մահալի եկամուտի հատկացումը: Սիմեոն Նրեանցու վկայությունները այդ հնարավոր առարկության համար ևս տեղ չեն թողնում: Օրինակ, «Ջամբու-

¹ Ի. Պ. Պետրուշևսկի, Նշվ. աշխ., էջ 241:

Տե՛ս Մեսրոպ Եղ. Սմբատյան, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառին, Վաղարշապատ, 1895, էջ 798-809:

Նույն տեղում, էջ 784:

ռում» կարգում ենք. «Ասկա նստի յերեան խան այնմ միջոցի Մահմադ-ղուլի ուն, և նա դաւթեալ ուտէ զմուլք երից զեղօրէիցս յամս քանիս ի կողմանէ ար-
ֆունեաց»¹: Ստ. Մալխասյանցը այդ «ի կողմանէ արքունեաց» դարձվածքը
շատ ճիշտ կերպով թարգմանել է «как казенное содержание». «Թահմադ-
ղուլին դաւթե զմուլք զեղջս և ուտէ իւր տօնլուդին տեղն»²: Այսպիսով Դավիթ-
խանը ի դիմաց «զկառավարութեան գործոց» ստանում է ինը գյուղի տասա-
նորդը, Մելիք-Բեդր «արքունի հասույթը» ապահովելու համար ստանում է 8
գյուղի մուլքը, Մահմադ-ղուլին մուլքը յուրացնում է «ի կողմանէ արքունեաց»
և Թահմադ-ղուլին մուլքը յուրացնում է «իւր տօնլուդին տեղն»: Էլ ի՞նչ է հար-
կավոր ապացուցելու համար, որ մուլքի ծագումը կարող էր կապված լինել նաև
գրույթային ուճիկի հետ:

Բայց դա հարցի միայն երեսնական կողմն է: Շուպենը դրում է. «Մուլքա-
դարը չէր կարող իրեն համարել նրան որպես մուլք հատկացված գյուղի, հո-
ղերի կամ բնակիչների որեւէ մասի տիրակալ, այլ պարզապես համարվում էր
դրանցից ստացվող եկամուտների մասնակից, ճիշտ այնպես, ինչպես գրույ-
թային ուճիկի դեպքում նա կլինէր գանձարանի ստացած եկամուտների մաս-
նակից, այսինքն՝ գանձարանից կստանար ուճիկ»³: Այս այլ բան չի նշանա-
կում, քան այն, որ ընդհանուր հարկ-ոկենտան տրոհվում էր պետության և տի-
րոջ գասակարգի ներկայացուցիչների միջև որպես բահրա և մուլք: Մեր կար-
ծիքով այդ առումով Շուպենի և մեր հետազոտողների միջև որեւէ տարաձայ-
նություն չկա, քանի որ Պետրուշևսկին ինքը մուլքը համարում է հարկ-ոկեն-
տայի ֆեոդալին հասնող մասը, իսկ Բ. Հարությունյանը, ինչպես տեսանք,
պարզապես գտնում է, որ հարկ-ոկենտայի այդ մասը պետության կողմից զիջ-
վում էր արտոնյալներին՝ որպես պարզե պետական կամ կրոնական ծառայու-
թյունների համար: Այսպիսով, մեր հետազոտողները վեճը Շուպենի և մինչ-
ոկույցիոն կովկասագետների հետ այդ հարցում անբովանդակ է և արդյունք
է լուկ տնհետեղականության: Ոչ մի տեղ Շուպենը չի ասել, որ մուլք-գույքը
կապված էր ուճիկի հետ, նրա խոսքը տասանորդ-մուլքի մասին է:

Ամփոփելով մեր կարծիքը պարսկական տիրապետության շրջանի մուլքա-
դարության մասին, մենք հանդում ենք այն եզրակացության, որ մուլքագա-
րական իրավունքը հիմնված էր ոչ թե հողի կալվածատիրական, սեփականու-
թյան վրա, այլ հարկ-ոկենտայի մի մասի յուրացման: Այդ պատճառով էլ Սի-
մեոն երեանցին գրում է. «Գլ. Ժ^ր. Յորում ցուցանին յատուկ, յատուկ և յանու-
տնէ մլքատու (իմա՝ մուլքագարական—Ս. Ս.) զեօղօրայք սրբոյ Աթոռոյս,
յորոց ի յայգեաց և ի սերմանեկեաց առնու զմուլքս, այսինքն՝ գտասանորդո»⁴:

* * *

Հողային հարաբերություններին վերաբերող մյուս հարցը, որը պրոֆ-
Բշտունին արդեն լիովին պարզված է համարում, թիուլի հարցն է: Ընդ որում,
մեր բոլոր հեղինակները հանգել են այն մտքին, որ եթե մուլքը համապատաս-

¹ «Ջամբո», էջ 124:

² Նույն տեղում, էջ 103:

³ Н. Шопен, Исторический памятник состояния Армянской области... 1852.
էջ 927:

⁴ «Ջամբո», էջ 99:

խանում էր միջնադարյան Եվրոպայի «ֆեոդալիզմի», ապա թիուր՝ յուրահատուկ բեճեփիցիա էր:

Եթե Ա. Մ. Եսայանի և Բ. Մ. Հարությունյանի մոտ թիուլի մասին խոսվում է ղեկավարափոխ կերպով, ապա Ի. Պ. Պետրուշևսկին նույն թեզն աշխատում է ապացուցել դրական տվյալներով: Ուստի, բնականաբար, մենք կանդենք առնելու գլխավորապես այս վերջին հեղինակի տվյալների վրա:

Վ. Ռշտունին իր հոդվածում գրում է. «Ի. Պ. Պետրուշևսկու՝ վերնում համառոտակի և շատ բնդհանուր պծերով շարադրված տեսակետը թիուլի և թիուլ-դարության վերաբերյալ՝ իրեն ֆեոդալական հոդատիրության մի տեսակի, նրա մտքերը դրանց պարզացման բնթացքի և տենդենցի մասին, այն է՝ պայմանական հոդատիրությունից, յուրատեսակ բենեֆիցիայից ժառանգական հոդատիրության կամ լենի (ալոդի) փոխվելու տենդենցի մասին, մեզ բնդհանուր առմամբ բնդունելի են թվում»¹:

Այժմ արձանագրենք, որ Ռշտունու կարծիքով թիուլը տենդենց ուներ փոխարկվելու լենի (ալոդի), իսկ եթե նկատի ունենանք, որ նրա կարծիքով մուլքը համապատասխանում է «լեն-ալոդին», ապա դժվար չէ եզրակացնել, որ թիուլը տենդենց էր ցուցաբերում վերածվելու մուլքի:

Բայց բանն այն է, որ Պետրուշևսկու կարծիքով թիուլը պաշտոնապես, բայց շահական ուղղամենքի նշանակում էր խաբկի ուրոշ մասի հատուցում, բայց ոչ հոդատիրություն: Այսպես, նա գրում է. «Այստեղ «թիուլը», ակներևորեն, հարկային մուտքերի մի մասի նշանակութուն ուներ, որ դանձվում էր հարկատու բնակիչներից և պետության կողմից հատկացվում էր զինվորական պաշտոնյաներին որպես ծառայության դիմաց վարձատրություն»²: «Անֆեվիդների թիուլը Բեռլինում (բնդգծումը մերն է—Ս. Մ.) նշանակում էր ծառայության դիմաց որպես շնորհում հատկացնել հոդային հարկի մի մասը, բայց ոչ թե հոդերը և դրանց վրա ապրող բնակչութունը»³: «Եվ իսկապես սեֆեվիդական պաշտոնական փաստաթղթերում թիուլը դիտվում էր որպես հարկ-ունտայի մի մասի շնորհում»⁴: Բայց կյանքում, տեսնում է Պետրուշևսկին, միշտ չէ, որ իրերի դրությունը համապատասխանում էր տեսությանը: Այնուհետև նա բերում է մի շարք, մեր կարծիքով, միանգամայն ոչ համոզիչ փաստեր, որպեսզի ապացուցի, թե գործնականում «թիուլի տիրապետողները XVI—XVII դդ. ձգտում էին ունտայի տիրումը դարձնել հոդի պայմանական տիրում»⁵: Միաժամանակ նա պուշացնում է. «Բայց բնդսմին պետք է նշել, որ թիուլդարների տիրակալական իրավունքների բնդլայնումը ստեղծվում էր վերջիններիս կողմից բոնություններ հանդես բերելու և պովթումների ձանադարհով»⁶: Իր թեզն ապացուցելու համար նա հենվում է ոչ թե շահական պաշտոնական փաստաթղթերի վրա, բանի որ «շահական ֆերմանների տեքստերը երևան չեն բերում թիուլ-դարների իրավունքների այդպիսի բնդլայնում»⁷, այլ վկայակոչում է վերապատմողական աղբյուրները:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 24—25: Մեր կարծիքով, ֆեոդր (լենը) ալոդի հետ նույնացնելը պատմական և իրավական որևէ հիմք չունի: Դրանք միմյանց հակասող երևույթներ են:

² Ի. Պ. Պետրուշևսկի, Նշվ. աշխ., էջ 183:

³ Նույն տեղում, էջ 188—189:

⁴ Նույն տեղում, էջ 203:

⁵ Նույն տեղում, էջ 201:

Արրաս II-ի պատմագիր Մուհամմեդ Թահիր-Ֆահիդը գրում է, որ Ուրմիայի շրջանը գտնվում էր Ավշար ցեղի ներկայացուցիչների ձեռքին: Այդ ցեղը կազմված էր բազմաթիվ տոհմերից և միշտ չէ, որ խաները միևնույն տոհմից էին լինում: Ծանոթագրության մեջ հեղինակը հիշատակում է, որ Մինորսկին նշում է Ավշար ցեղի 7 խաների, որոնք տարբեր տոհմերից էին: XVII դ. կեսերին շահական իշխանությունը Ուրմիայի հաքիմին (խանին) հեռացնում է և «նրա թիուլի շրջանը շնորհում է նրա հորեղբայր Մուհամեդ Կուլի խանին, որը խորասանում Ֆառախի նախկին հաքիմն էր»: Այնուհետև Պետրուշևսկին շարունակում է. «Քանի որ այդ հաքիմը ռազմական կարիքների համար վառող պատրաստելու դործում ջանք չթափեց, որ նրա պարտականությունն էր, ուստի նա հեռացվեց և փոխարինվեց Ավշար Ասլան խանով»: Պետրուշևսկին տողասակի ծանոթագրության մեջ ավելացնում է. «Այս դեպքում շնորհումն անվաճ՝ ված է պարզապես «ուլքա», «երկրամաս», «փոխարքայություն», իսկ «թիուլ» արտահայտությունը գործածված չէ»¹:

Մեր հեղինակը այս պատմությունից անում է հետևյալ եզրակացությունը. «Շահի կողմից թիուլի շրջան շնորհելը նույն ժամանակն է նշանակում, ինչ որ շրջանի կառավարիչ նշանակելը»: Այո, ճիշտ է, ներկա կոնտեքստում թիուլի շրջան և օլքե (երկրամաս) նույն ժամանակն են նշանակում: Բայց Պետրուշևսկին այդ չէ, որ պետք է ասացուցեր, այլ այն, որ Ուրմիայի շրջանի թիուլդարը երկրի փաստական տերն էր: Մինչդեռ այդ ամբողջ պատմությունից բխում է, որ Ուրմիայի շրջանի հաքիմները նշանակվում և հեռացվում էին շահի կողմից, ուրեմն՝ պետական պաշտոնյաներ էին, և հաքիմի պաշտոնը երկար ժամանակ հանձնրվում էր Ավշար ցեղի տարբեր տոհմերի ներկայացուցիչներին: Այդ հաքիմները, իրենց երկրի կառավարիչներ, ստանում էին թիուլը կամ օլքեն, իսկ որովհետև օլքեի շնորհումը, Պետրուշևսկու խոստովանությամբ, նույն ժամանակն է, ինչ որ թիուլի շնորհումը, ասա խոսքը կարող է վերաբերել միայն հարկ-ռենտայի մի մասին, քանի որ այդ ամենը տեղի է ունենում շահի կարգադրությամբ, պաշտոնական կարգով, իսկ նույն հեղինակի խոստովանությամբ, «սեֆևիդների պաշտոնական թղթերում թիուլը դիտվում է որպես հարկ-ռենտայի մի մասի շնորհում միայն»: Մի՞թե այս ամենում փոքրիկ նշույլ կա այն բանի, որ ռենտայի շնորհումը դառնում է պայմանական հողատիրություն:

«Երկրորդ ուղին, որով զարգանում էր թիուլդարների իշխանության ընդլայնման և թիուլը պայմանական հողատիրության մի տեսակը դառնալու պրոցեսը, նկատվում է այնտեղ, որտեղ Իրանական կենտրոնական կառավարության կողմից թիուլները շնորհվում էին տեղական միջին և մանր ֆեոդալներին»²: Պետրուշևսկին բերում է մի շարք օրինակներ, որոնք միմյանցից ոչնչով չեն տարբերվում և շատ հեռու են նրա թեզն ասացուցելուց: Ահավասիկ. «Ժականդար Մունշիի օվլալներից երկուսն է, որ թիուլդարները ասորում էին իրենց թիուլի տերիտորիայում»: Իրանից նա եզրակացնում է. «Նրանք ըստ երևույթին այդ տերիտորիաները ստանում էին եթե ոչ որպես իշխողներ, ասլա որպես հողատերեր»: «Զորքերը Շիրվանից վերադառնալուց հետո, — պատմում է նույն հեղինակը (Ի. Մունշին), — զինվորները արձակուրդ ստանալով, իրենց երեսը դարձրին զեպի իրենց բնակարաններն ու հայրենի երկիրը, իսկ մեծ էմիր-

¹ Ի. Ֆ. Պետրուշևսկի, նշվ. աշխ., էջ 201:

² Նույն տեղում, էջ 202:

ները ուղևորվեցին յուրաքանչյուրն իր թիույի և իքթայի մահալը»։ «Բեկտաշ-խանը իր որդի Մելիքեշ սուլթանի հետ, արձակուրդ ստանալով, ուղևորվեցին Մերսի՝ իրենց թիույի մահալը»¹։

Ուրեմն, որովհետև աղբյուրում ասված է, որ թիուլդարները ապրում էին իրենց թիույի տերիտորիայում կամ որ նրանք ուղևորվեցին իրենց թիույի մահալը, Պետրուշևսկին եզրակացնում է, որ ներկա դեպքում թիուլդարը հողի պայմանական տիրակալն էր։ Այս եզրակացությունը, մեր կարծիքով, չի բխում նրա բերած փաստերից։ Առնվազն նույնքան իրավացիորեն կարելի է անել բազմաթիվ այլ եզրակացություններ. օրինակ՝ որ նրանք ուղևորվեցին այս շրջանները, որտեղ նրանք որպես թիուլ ստանում էին իրենց հատկացված հարկ-ոկենտայի մի մասը։

Այսպիսով, մեզ թվում է, բոլորովին ապացուցված չէ Պետրուշևսկու այն տեսակետը, որ մինչև «կիսանկախ» խանությունների հանդես գալը թիուլդար տեսական ըմբռնումը (որ ունեւան յուրացնելու իրավունք էր միայն) տեղի է տալիս և թիուլը կյանքում երկու ուղղությամբ վերափոխվում է պայմանական հողատիրության։ Այդ եզրակացությունը, մեր կարծիքով, հեղինակի կողմից աղբյուրների յուրովի և չհիմնավորված մեկնաբանության արդյունք է։

Ի. Պ. Պետրուշևսկու կարծիքով՝ Աղբյուրների խանություններում թիույի զարգացումը XVIII դ. երկրորդ կեսին և XIX դ. առաջին տասնամյակում արդեն հանդել էր հողատիրության մի տեսակին։ Պատմական այս շրջանն էլ, հատկապես Արևելյան Հայաստանի վերաբերյալ, հետաքրքրում է ընկ. Ռշտունյանը։ «XVIII դարում Անդրկովկասի խաների կողմից թիուլային շնորհումները, — գրում է Պետրուշևսկին, — շահական նույնպիսի շնորհումներից տարբերվում էին նրանով, որ պաշտոնապես սրբա թիուլ հարկ-ոկենտային կամ դրա մի մասին զուգընթաց շնորհվում էին նաև հողերը նրանց բնակիչներով, հարկատու զուգացիներով»²։ Հեղինակի այս միաբեր պարզ ապացույց է, որ թիուլի էությունը նրա համար հասակորեն պարզ չէ։ Եվ իրոք, եթե պաշտոնապես շնորհվում էին հողերն ու զուգացիները, ապա այդ ակտը իր մեջ ինքնին արդեն պարունակում է այն, որ հարկ-ոկենտան վերափոխվում է պարզապես հողային ոկենտայի և դանձվում է հողուտ կալվածատիրոջ։ Ել ի՞նչ խոսք կարող է լինել դրա հետ զուգընթաց հարկ-ոկենտայի մի մասի շնորհման վերաբերյալ։ Մեր հեղինակների զարմանալի մեկնություններից երևում է, որ նրանք հարցը դնում լիովին պարզ չեն պատկերացնում։

«Եվ այսպես [թիուլների] ժառանգականությունը սկսել էր դառնալ ընդհանուր կանոն, թեպետ և չէր ձանաչված որպես ընդհանուր օրենք»³, — գրում է Պետրուշևսկին, — իսկ Վ. Ռշտունյան գրում է. «Ի. Պ. Պետրուշևսկու... տեսակետը թիուլի և թիուլդարության վերաբերյալ... այն է՝ պայմանական հողատիրությունից... ժառանգական հողատիրության փոխվելու տենդենցի մասին, մեզ ընդհանուր առմամբ ընդունելի է թվում»⁴։ Այսպիսով, երկու հեղինակներն էլ ընդունում են, որ դոնե առօրյա կյանքում թիուլը նաև պաշտոնապես ժառանգական հողատիրության բնույթ էր բնութագրում։ Մինչդեռ այդ նույն հեղինակները, խոսելով Բ. Հարությունյանի դրույթի մասին, բաց ուրի՝ «ի տար-

¹ Ի. Պ. Պետրուշևսկի, նշվ. աշխ., էջ 204—205։

² Նույն տեղում, էջ 217։

³ Նույն տեղում, էջ 20։

⁴ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 24—25։

բերություն մուլբի, թիուլային իրավունքը չէր կարելի վաճառել», իրենք կողմից լրացնում են. «զորան կարելի կլիներ ավելացնել, որ թիուլը չէր կարելի նաև նանձնել րստ ժառանգության»¹: «Ավելացնենք մեր կողմից — որ [թիուլը] չէր կարելի նաև ժառանգություն թողնել. այն իբրև կանոն ժամանակավոր էր, շատ-շատ ցմահ»²: Ավելին, Պետրուշևսկին իր աշխատություն 220-րդ էջում գրում է. «Գործնականում XVIII դ. երկրորդ կեսին թիուլները... հաճախ հանձնելովում էին ժառանգարար», իսկ 221-րդ էջում պնդում է հակառակը՝ «այլ խոսքով, (թիուլի) շնորհումը իրական էր համարվում մինչև կողմերից մեկի՝ խանի կամ շնորհյալի մահը: Այդ ժամանակ դրանով էր տարբերվում թիուլային տիրույթը ժառանգական մուլբից»:

Վերևում մենք արձանագրեցինք, որ պրոֆ. Ռշտունու կարծիքով թիուլը Արևելյան Հայաստանում Խուսաստանին միանալու նախօրյակին հողատիրության մի տեսակն էր և տեղեկաց ուներ մուլբ, այսինքն՝ ժառանգական հողային սեփականություն դառնալու: Բայց թեզն ապացուցելու համար նա որևէ դրական տվյալ չի բերում, այլ հենվում է լուրջ Պետրուշևսկու կարծիքի վրա: Այդ դեպքում մեզ համար առեղծված է մնում այն հարցը, թե ինչպես է նա «ընդհանուր առմամբ ընդունելի համարում» Պետրուշևսկու կարծիքը, երբ նրանի խանությունում կիրառվող թիուլի վերաբերյալ նրանք տրամադծորեն հակառակ կարծիք ունեն:

XVIII դ. երկրորդ կեսի և XIX դ. առաջին տասնամյակների վերաբերյալ Պետրուշևսկին բազմիցս կրկնում է, որ Ադրբեջանի խանություններում թիուլի ինստիտուտը հարկ-ոկենտայի մի մասը լինելուց վերածվել էր հողային սեփականության: «Նրանի մարդում, — գրում է Պետրուշևսկին, — կիրառվում էր, մանավանդ XVIII դարում, թիուլի մի հատուկ տեսակ, այն է՝ մուլբադարներին, որոնք իրավունք ունեին իրենց գյուղացիներից գանձել բահրայի և մյուս գանձումների մի մասը միայն..., բահրայի մնացած մասը (փոքր բահրան-բահրա-չեն) շահը որպես հատուկ ողորմածություն հատկացնում էր նրանց՝ իրենց օգտին գանձելու որպես թիուլ...: Թիուլի այդ տեսակը հարկային իմունիտետից տարբերվում էր լուրջ նրանով, որ սկզբունքորեն ժառանգական չէր»³: Այնուհետև խոսելով Շուսենի նկարագրած թիուլի մասին նա գրում է, որ այդ հեղինակը, «թիուլի ինստիտուտի հետ ծանոթ լինելով միայն նրանի մարդում շատ տարածված թիուլի այդ տարածականության հետ, և պատկերացում չունենալով, թե ինչ էր թիուլը Անդրկովկասի մյուս խանություններում, սխալմամբ այդ ընդունել է թիուլի ինստիտուտի տեղը»⁴:

Այս ամենից բխում է, որ Պետրուշևսկու կարծիքով, ի տարբերություն Անդրկովկասի մյուս խանությունների, որտեղ թիուլի շնորհումը դարձել էր հողի շնորհում, նրանի մարդում իբրև թիուլ հատկացվում էր հարկ-ոկենտայի պետությանը պատկանող մասը: Եթե այդ դիտողությունը համադրենք նրա ընդհանուր կոնցեպցիայի հետ և նկատի ունենանք նրա միանգամայն ճիշտ կարծիքը, որ թիուլը «տեսականորեն» կամ պաշտոնապես համարվում էր հարկ-ոկենտայի մի մասի հատկացումը միայն (բայց ոչ հողն ու գյուղացիներին), ապա չի կարելի չգալ այն եզրակացություն, որ գոնե նրանի մարդում

¹ Ի. Պ. Պետրուշևսկի, նշվ. աշխ., էջ 208:

² «Պատմա-բանասիրական հանդես», 1938, № 2, էջ 21:

³ Ի. Պ. Պետրուշևսկի, նշվ. աշխ., էջ 207:

⁴ Նույն տեղում:

Թիուլի տեսական ըմբռնման և գործնական կիրառման միջև որևէ հակասություն չկար: Այն, որ ինքը Պետրուշևսկին այդ եզրակացությանը չի հանգում, իսկ Ռշտունին, համարելով Թիուլը Արևելյան Հայաստանում հողատիրության մի տեսակ, որը մուլքի վերածվելու տենդենց է ցուցաբերում, միաժամանակ հայտարարում է, թե ինքը հիմնականում համաձայն է Պետրուշևսկու հետ: Ընդհանուր է տալիս այդ հեղինակների անհետևողականությունը:

Պետրուշևսկին միանգամայն իրավացիորեն ընդգծում է, որ Երևանի և Նախիջևանի խանություններում միևնույն անձնավորությունը հաճախ հանդես է գալիս և՛ մուլքադարի, և՛ քիուլդարի ղեկում: Այդ դրույթի դեմ դեռ ոչ ոք չի առարկել: Խ. Հ. Ավդալբեգյանի հետաքրքրական աշխատության մեջ (որի մի քանի տեսական դրույթների հետ մենք համակարծիք չենք) բերվում է հետևյալ փաստը. «Մելիք-Սահակը Թիուլային-Իրավունքով տիրում էր Արզական, Դալուար և Գյումուշ գյուղերին: Մելիք-Սահակի մահից հետո նրա ժառանգները կորցրին այդ գյուղերի Թիուլային իրավունքը, իսկ մուլքադարականը նույն Մելիք-Սահակի տոհմի ժառանգների ձեռքին մնաց»¹: Եթե տվյալ դրույթի, օրինակ՝ Արզականի, մուլքը մասնավոր սեփականության իրավունքով պատկանում էր ֆեոդալին, ապա նույն գյուղում Թիուլային իրավունք ստանալը հողային սեփականության բնույթ կրել չէր կարող այն պարզ պատճառով, որ մեր հետազոտողների պատկերացմամբ հողային ֆոնդը մինչև Թիուլի շնորհիվ արդեն ֆեոդալի սեփականությունն էր հանդիսանում: Եթե ենթադրենք, որ գյուղի հողային ֆոնդը բաժանված էր երկու մասի, որոնցից մեկը մուլքադարի մասնավոր սեփականությունն էր, իսկ մյուսը՝ պետական հող էր, որն իբրև Թիուլ հատկացվում էր նույն ֆեոդալին, ապա հարկ է նշել, որ նախ՝ մենք այդպիսի գյուղի չենք հանդիպել, երկրորդ՝ Մելիք-Սահակի ժառանգները, զրկվելով Թիուլից, շարունակում են մնալ ոչ թե գյուղի մի մասի, այլ ամբողջ գյուղի մուլքադարը: Հետևաբար հողային ֆոնդը բաժանված չէր ֆեոդալի ու պետության միջև: Թե մուլքադարությունը, թե Թիուլդարությունը վերաբերում էին ամբողջ գյուղի հողային ֆոնդին: Իսկ եթե այդպես է, ապա միևնույն հողային տարածությունը չէր կարող լինել և անսլացման սեփականություն, և սլացմանական, և՛ ժառանգական սեփականություն, և՛ «շատ-շատ ցամաք»²: Ուրեմն, եթե հարցին մոտենալու լինենք ոչ թե մեր կոնցեսյոնարյով, այլ պրոֆ. Ռշտունու և մյուսների տեսակետով, դարձյալ տրամաբանությունը հարկադրում է ընդունել, որ Թիուլը ինչպես «տեսականորեն», այնպես էլ գործնականորեն բացի հարկ-ռենտայի հատկացումից այլ բան նշանակել չէր կարող:

Գրեթե քառորդ դար է, որ մեր հետազոտողները, մեկը մյուսին հետևելով, կրկնում են, թե Թիուլը դա յուրահատուկ բենեֆիցիա է: Մենք գտնում ենք, որ այդ բնորոշումը հիմնականում միանգամայն տեղին է: Բայց այդ զեպում Թիուլը և բենեֆիցիան պետք է ունենան և՛ ընդհանուր, և՛ տարբեր կողմեր: Մինչդեռ մեր հետազոտողները Թիուլին վերագրում են բենեֆիցիայի բոլոր ատրիբուտները և մոռանում են նշել, թե ո՞րն էր դրա յուրահատկությունը: Մեր կարծիքով, դրանց ընդհանուր կողմն այն է, որ երկուսն էլ սլացմանական, ոչ ժառանգական հատկացում են, իսկ տարբերությունն այն է, որ բենեֆիցիան հողի հատկացում է, իսկ Թիուլը՝ հարկ-ռենտայի որոշ մասի: Այս տեսակետից

¹ Խ. Հ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, 1959, էջ 103: Նույն տեղում:

միանգամայն իրավացի է Բ. Մ. Հարությունյանը, երբ գրում է. «Թիուլությունը ըստ իր ծագման համասեռ է մուլքի հետ և մուլքի մի տեսակն է հանդիսանում, այսպես ասած, դրա ընդլայնված բնութագրով»¹, միայն թե «թիուլ» և «մուլք» տերմինների տակ պետք է հասկանալ հարկ-ոննտայի ոլորտ մասի տիրապետում:

Այսպիսով, մեր և մյուս հետազոտողների կարծիքները ֆեոդալական սեփականության բնույթի մասին տրամադծորեն հակադիր են: Թեև ընկ. Ռշտունին ամենայն վստահությամբ հայտարարում է, թե «սովետական հետազոտողները մուլքադարության և թիուլադարության վերաբերյալ հանգել են ընդհանուր հզորակացությունների», մենք հավակնում ենք պնդել, որ այդ պրոբլեմի վերաբերյալ տակավին շատ հարցեր կան, որոնց շուրջը հակադիր կարծիքներ ունենան իր կողմից վկայակոչված հեղինակները:

Ա. Մ. Եսայանի կարծիքով, մուլքը մեր երկրում, բացի հողային սեփականությունից, այլ իմաստ չի ունեցել:

Բ. Հարությունյանը և Պետրուշևսկին ընդունում են, որ մուլքը ունեցել է նաև հարկ-ոննտայի իմաստ:

Եսայանը ընդունում է, որ մուլքն սկզբում սոսկ բենեֆիցիայի իմաստ է ունեցել և միայն հետագայում է վերածվել հողի անսղայման սեփականության:

Պետրուշևսկու կարծիքով, մուլքը հենց սկզբից կալվածատիրական անսղայման սեփականության բնույթ է կրել: Նա գտնում է, որ մուլք-տասանորդը ծառայության դիմաց տրվող ոռճիկի հետ կապվելով լուրջ անմիտ հայտարարություն է:

Բ. Հարությունյանը գրում է, որ մուլք-տասանորդը «այլ բան չէ, քան ընդհանուր ոննտայի մի մասը, որը գանձարանը հատկացնում էր վանազան մարդկանց և կրոնական հաստատություններին նրանց կողմից պետական ծառայություն կատարելու դիմաց՝ ոռճիկի փոխարեն»²:

Բ. Հարությունյանի կարծիքով, թիուլային իրավունքը նույնական է մուլքային իրավունքի հետ:

Պետրուշևսկին գրում է, որ այդ կնշանակելու անքննադատորեն հավատալ Շոպենի անհիմն կարծիքին: Նա գտնում է, որ երևանի խանությունում թիուլը հարկ-ոննտայի մի մասի հատկացումն էր մուլքադարին:

Եսայանը և Հարությունյանը թիուլը համարում են հողային սղայմանական տիրույթ նաև երևանի խանությունում:

Բ. Հարությունյանը իր աշխատության 19-րդ էջում գրում է. «Ռենտայի մուլքադարական մասը ընդհանուր ոննտայի մի մասն էր, որ պետությունը ղեջում էր գանազան մարդկանց», իսկ 33-րդ էջում կարդում ենք. «Մուլքը ոննտա ստանալու առումով սերտ կերպով կապված էր սեփականության իրավունքի հետ»:

«Կիսանկախ» խանությունների վերաբերյալ Պետրուշևսկին մի տեղ գրում է. «Թիուլի» ժառանգությունը դարձել էր ընդհանուր կանոն (էջ 220), մի այլ տեղ՝ «թիուլը չէր կարելի հանձնել ժառանգաբար» (էջ 208), կամ՝ «թիուլի հատկացումը իրական էր համարվում մինչև խանի կամ շնորհյալի «մահը» (էջ 221):

¹ Բ. Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 38:

² Նույն տեղում, էջ 19:

Բ. Հարությունյանը մի կողմից բազմիցս ընդգծում է, որ Վաղարշապատ գյուղի բոլոր հոգերը, մինչև իսկ սնատեղերը, վանքի մասնավոր սեփականությունն էին կազմում, մի այլ տեղ գրում է, որ վանքը իրեն պատկանող գյուղում հողակտորներ ունեւ, որոնք ձեռք էր բերել գյուղացիներից զնկու, նվիրարերության և զավթումների միջոցով (էջ 39)։

Նման բազմաթիվ տարախոսությունները ոչ միայն տարրեր հետազոտողների միջև, այլև միևնույն հետազոտողի նույն աշխատության մեջ միայն մի րան են վկայում՝ որ տակավին մեծ կարիք է զգացվում անդրադառնալու այդ պրոբլեմին։

*

Պրոֆ. Ռշտունին իր հոդվածում, ինչպես արդեն ասել ենք, քննության է առնում նաև ճորտատիրության պրոբլեմը և հանգում է այն եզրակացության, որ այդ հարցի շուրջը սովետական հետազոտողների կողմից «որոշ տարածայնություն ղեռ հաղթահարված չէ»։

Եվ իսկապես, մինչդեռ Ի. Պ. Պետրուշևսկին գտնում է, որ «մինչև ռուսացիոն ժամանակաշրջանի կովկասագետների թեթև ձեռքով տարածված այն կարծիքը, որ գյուղացիներին հողին ամրացնելը գոյություն ունեւ իբր թե միայն վրաստանում, բայց ոչ Հայաստանի և Ադրբեջանի խանություններում, ճիշտ չէ»¹, Ա. Մ. Եսայանը տրամագծորեն հակառակ կարծիքի է. «Մուրազաբական և թիւղարական գյուղացիները, — գրում է նա, — որոշ պայմաններում կարող էին ազատ կերպով թողնել առաջվա տերերի հողերը և ուրիշների մոտ տեղափոխվել»։ Այդ հանգամանքը նա ընդհանրացնում է և գտնում, որ «հենց այստեղ պետք է որոնել արեւելյան ֆեոդալիզմի տարրերությունը Արեւմտքի ֆեոդալիզմից»²։ Իսկ Վ. Հ. Ռշտունին գտնում է, որ «կարելի է խոսել Արեւելյան Հայաստանում միայն ճորտատիրության բազմաթիվ տարրերի մասին, բայց ոչ մի ղեպրում գյուղացիության ճորտացման և հողին ամրացնելու ակներև իրողության մասին»³։

Մենք կարծում ենք, որ նախքան ղրված հարցին պատասխանելը, պետք է հստակ կերպով որոշել, թե ինչ ենք հասկանում «ճորտ», «ճորտային իրավունք», «ճորտային հարաբերություններ» տերմինների տակ։ Ուվում է, որ հարցը հաճախ խճողվում է այն պատճառով, որ տարրեր հետազոտողներ այդ տերմիններին միանգամայն տարրեր բովանդակություններ են հաղորդում կամ «ճորտային իրավունք» ասելով հասկանում են «ճորտատիրական հարաբերություններ» և ընդհակառակը։

Մեր ականավոր պատմաբան ակադեմիկոս Հ. Մանանդյանը, խոսելով Արշակունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, անդրադառնում է նաև այդ հարցի տեսական կողմին։ «Պետք է ասել, — գրում է նա, — որ ճորտ ու ճորտություն բառերը խիստ ճապող և առաձգական գաղափարներ են, որոնց տակ հասկացել են տնտեսական ու իրավական բովանդակաւ տարրեր ղրություններ։ Ճորտությունը հաճախ այնքան մեղմ է եղել, որ շատ քիչ է տարրերվել ազատ գյուղացիների ղրությունից, իսկ երբեմն այնքան ծանր է եղել, որ շատ մոտ է եղել ստրկության»⁴։ Որ ճորտությունը երբեմն

¹ Ի. Պետրուշևսկի, նշվ. աշխ., էջ 262։

² А. М. Есаян, Мульткадарское право в Армении, Ереван, 1948, էջ 32։

³ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 37։

⁴ Հ. Մանանդյան, Գնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. II, մ. 1, Երևան, 1957, էջ 368։

մոտ է եղել ստրկության, երբեմն էլ հասարակ կախվածության, այդ մասին մենք ունենք էնգելսի ուղղակի ցուցումը. «Վաղ միջնադարի ճորտային իրավունքը, որն իր մեջ պարունակում էր հնադարյան ստրկության շատ գծեր, տիրոջն իրավունքներ էր վերապահում, որոնք ավելի ու ավելի էին կորցնում իրենց արժեքը, դրանք աստիճանաբար թուլանում էին, և ճորտերի դրությունը մոտենում էր հասարակ կախվածության»¹։ Ինչպես տեսնում ենք, էնգելսը երկու տիպի ճորտային վիճակ է արձանագրում։ Բայց ճորտային վիճակը տարբերվում է ինչպես ստրկությունից, այնպես էլ «հասարակ կախվածությունից»։ Ահադ. Մանանդյանի մոտ «ճորտ» և «ճորտություն» դադափարները «ճապաղ» են պատկերանում սոսկ այն պատճառով, որ այդ կատեգորիայի տակ նա միացնում է և՛ բուն ճորտերին, և՛ կախյալ գյուղացիությանը, մինչդեռ էնգելսի մոտ կախյալ գյուղացիները տարբերվում են ճորտերից։ Ահադ. շ. Մանանդյանը շարունակելով իր միտքը գրում է. «ճորտերի առաջին տեսակին պատկանում էին, օրինակ, Բյուզանդական կայսրության կոլոնները, որոնք անձնապես ազատ էին, բայց կապված էին հողին և շունչին տեղափոխման իրավունքի, իսկ երկրորդ տեսակին պատկանում էին ռուսական «крепостной»-ները և գերմանական «leibeigen» կոչված ճորտերը, որոնց դրությունը խիստ ծանր է եղել»։ Միանգամայն իրավացի է ակադ. Մանանդյանը, երբ կոլոնների դրությունը համարելով մեղմ, իսկ «крепостной»-ների և leibeigener գյուղացիների դրությունը ծանր, այնուամենայնիվ դրանց միացնում է մի ընդհանուր ճորտ հասկացողության տակ։ Բայց, մեր կարծիքով, ակադ. Մանանդյանը հակասում է ինքն իրեն, երբ այդ երկու կատեգորիայի գյուղացիներից մեկին համարում է ազատ, մյուսին՝ ոչ-ազատ։ Ճորտ լինելու հանգամանքը գյուղացու ոչ-ազատ լինելու հենց հիմնական ցուցանիշն է։

Ֆեոդալիզմի պայմաններում գյուղացիության ազատ կամ կախյալ լինելու մասին խոսելիս, մեզ թվում է, չի կարելի ուշադրության չառնել, թե ինչից է նա ազատ կամ ինչից է կախյալ։ Եթե կախումը կապված է հողին ամրացած լինելու և տեղափոխման իրավունքից զուրկ լինելու հետ, ապա առկա է ճորտության սկզբունք, իսկ եթե կախումը չի ուղեկցվում այդ հանգամանքներով, ապա առկա է գյուղացիության կախյալ վիճակ։ Այս վերջին դեպքում գյուղացու ազատությունը չի նշանակում բացարձակ ազատություն, այլ՝ ազատություն ճորտային վիճակից։ Ահադ. Մանանդյանը հենց այդ է, որ շփոթում է իրար հետ։ Այդ պատճառով էլ կոլոններին մի կողմից ազատ է համարում, մյուս կողմից՝ ճորտ. ռուսական «зависимый» և գերմանական «Höriger» գյուղացիներին՝ մի կողմից և «крепостной» ու «leibeigener» գյուղացիներին՝ մյուս կողմից գցում է միևնույն ճորտ հասկացողության տակ։ Մինչդեռ «կախյալ» և «ճորտ» տերմինները պատմական գրականության մեջ ինքնին բնորոշում են այդ կատեգորիաների գյուղացիների իրավական վիճակը։ Մարքսիզմի կլասիկները ֆեոդալական այդ երկու կարգի գյուղացիների համար ընդհանուր են համարում նրանց կախյալ վիճակը, սակայն մի դեպքում դա ուղեկցվում է հողին ամրացած լինելով, մյուս դեպքում՝ ոչ։ Բայց արտատեսակական հարկադրանքը հանդես է գալիս թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում։ Էնգելսը գրում է. «Եթե նա (գյուղացին—Ս. Մ.) ճորտ էր (leibeigener), նա լիովին

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XV, № 640:

² Ն. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 368 (բնագծումը մերն է—Ս. Մ.):

դտնվում էր իր տիրոջ իշխանության տակ: Եթե նա սոսկ կախյալ գյուղացի էր (Horiger), նրան ճնշելու համար արդեն բավական էին օրենքով և սլաշմանագրով սահմանված պարտականությունները, որոնք օրրստօրե ավելանում էին¹: Նույն աշխատության մեջ մի այլ առնչությամբ նա ասում է. «Բարեկեցիկ միջակ գյուղացիներից շատերն, իհարկե, քայքայվեցին, կախյալ գյուղացիներից շատերը հարկադրված եղան ճորտ դառնալ»², կամ՝ «Աղնվականները ծծում էին ճորտերի արյունը մինչև վերջին կաթիլը, իսկ հսկատակ (կախյալ—Ս. Մ.) գյուղացիներին... ծանրաբեռնում էին նորանոր տուրքերով և ծառայություններով»³: «Վերսկսվում և ավելի ուժեղանում է ազատ գյուղացիներին՝ կախյալ, կախյալ գյուղացիներին՝ ճորտ, իսկ մարկի քնդհանուր հողը տիրունի հող դարձնելու ձգտումը»⁴:

Հանրահայտ է, որ Վ. Ի. Լենինը ճորտության (крепостное состояние) հիմնական հատկանիշը համարում էր գյուղացու ամրացած լինելը հողին: Ուրեմն այդ հիմնական հատկանիշի առկայության դեպքում միայն գործ ունենք ճորտության հետ, իսկ երբ դա բացակայում է, ապա խոսք կարող է լինել ճորտությունից ազատ, բայց կախյալ գյուղացիության մասին:

Այսպես հասկանալով ճորտության էությունը, մենք կարծում ենք, որ չի կարելի, առանց փաստերի խնդարյունելու, քննիլոդ ժամանակաշրջանում մեր երկրում նույնիսկ ճորտության հետքեր գտնել, ինչպես աշխատում են այդ անել որոշ պատմաբաններ:

Միանգամայն իրավացի է Վ. Հ. Ռշտունին, երբ մատնանշելով Պետրուշևսկու վերապահումները, գրում է. «Ի. Պ. Պետրուշևսկու այս բոլոր եզրակացություններն ու հետևությունները, մեր կարծիքով, հենց զալիս են ապացուցելու այն, ինչի դեմ վիճում է, այսինքն՝ հենց այն, որ իրոք Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում ֆեոդալական գյուղացու ամրացումը հողին իրեն կանոն դրություն չունեի, ուրեմն ճորտացման դրություն մասին նույնպես անկարելի է խոսել»⁵: Ավելին, Պետրուշևսկու բերած փաստերի մեծագույն մասը ոչ թե կավածատիրոջ և գյուղացու հարաբերության ցուցանիշ է, մեր երկրի առումով՝ ոչ թե մուլքադարի և մուլքադարական գյուղում ապրող բնակչության հարաբերության ցուցանիշ, այլ պետական իշխանության և հսկատակների (ռահաթի) և Այն փաստը, որ շահերը ռահաթներին մի վայրից մյուսն են փոխադրել բռնի ուժի միջոցով, կապ չունի գյուղացու հողին ամրացած լինելու հետ. դա բխում է արևելյան բռնապետության՝ իրեն ուրույն պետական սիստեմի էությունից: Այն, որ խանությունների փաստական անկախության շրջանում խաները կամայականորեն էին վարվում գյուղացիության հետ, արդյունք էր ոչ թե նրանց կավածատեր-հողատեր լինելու, այլ այն բանի, որ նրանք իրենց սուլթանն էին համարում: Պետրուշևսկու և մյուսների այս ոչ-ձիշտ պատկերացումը ևս հետևվանք է այն բանի, որ նրանք չեն ուղղում հասկանալ այն իրողությունը, որ մեր երկրում այդ ժամանակ սուլթանի տերը և հողի սեփականության դերագույն իրավունքը հանդես էին գալիս միտսնարար: Իսկ «այս հանգամանքներում կարիք չկա, որ կախման հարաբերությունը թե քաղաքականորեն ու թե տնտեսապես

¹ Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմները Գերմանիայում, Սթևան, 1940, էջ 41:

² Նույն տեղում, էջ 139:

³ Նույն տեղում, էջ 33:

⁴ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XV, էջ 641:

⁵ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 29:

ավելի խիստ ձև ունենա, քան այն, որ առհասարակ բոլոր հպատակներն ունենալս պետության վերաբերմամբ»¹։ Եթե Պետրուշևսկին բերեր նույնանման փաստեր մուքագարների և գյուղացիության հարաբերության վերաբերյալ, այդ դեպքում նա ապացուցած կլիներ իր թեզը։ Բայց այդպիսի փաստեր գոյություն չունեն։

Պրոֆ. Ռշտունին իր հոդվածում, հաջող կերպով նկատելով Պետրուշևսկու հակասությունները, հենց նույն տեղում տալիս է հարցի իր ըմբռնումը։ Նա գրում է. թեև ճորտացման գոյության մասին չի կարելի խոսել, բայց «կար միայն հողին ամրացնելու և ճորտացնելու՝ գյուղացու անձի վրա դրեթև ան- ռաճմանափակ իրավունք հաստատելու այս կամ այն հաջողությամբ կիրառվող ձգտում կալվածատիրական շերտերի կողմից»։ Իսկ այդ այս բան չէր նշանա- կում, քան այն, որ «Արևելյան Անդրկովկասի ֆեոդալական կալվածատիրական տնտեսությունը, իհարկե, օժտված էր նորոտափրական հարաբերությունների զգալի տարբերով»²։ Ահավաստի, այս է ընկ. Ռշտունու հոդվածի լեյտմոտիվը ճորտատիրության հարցի վերաբերյալ, որը նա մի քանի անգամ կրկնում է։

Երբ Ռշտունին քննադատում է մինչև ռուսացիոն հեղինակների տեսակետ- ները, նրա փաստարկումները վերաբերում են բացառապես նորոտային իրա- վունին, այսինքն՝ ճորտային վիճակի իրավական հաստատմանը, իսկ եղրա- կացությունը՝ ճորտատիրական հարաբերություններին։ Օրինակ, նա գրում է, որ ըստ Ս. Ղորգանյանի, «Անդրկովկասում չի եղել ստրկական իրավունք (крепостное право), որ Ս. էսաձևի կարծիքով՝ Հայկական մարզում «չկար գյու- ղացու անձնական կախում հողատիրոջից և ամրացում հողին», իսկ Ա. Արաս- խանյանցի կարծիքով՝ «Օրենսդիրը, միևնույն անունը տալով երկու կարգի գյուղացիներին, կամեցել է հասկացնել՝ թե՛ պետական, թե՛ կալվածատեր սեփականների հողերի վրա բնակվող գյուղացիները հավասարապես ազատ գյուղացիներ են և որ թե՛ դատարանի առաջ, թե՛ տուրքերի կողմից նոքա նմանապես հավասար են»³։ Այսպիսով, բոլոր դեպքերում խոսքը նորոտային իրավունքի մասին է, մինչդեռ այդ մեջբերումների հիման վրա հոդվածի հե- ղինակը եղրակացնում է, որ այդ հեղինակները «անտեսում են ֆեոդալական- նորոտափրական հարաբերությունների առկայությունը Հայաստանում և Ազր- բեյջանում»⁴։ Արդյոք այս չի՞ նշանակում, որ պրոֆ. Ռշտունին ճորտային իրա- վունք և ճորտատիրական հարաբերություններ հասկացությունների միջև հավասարության նշան է դնում։

Երբ Ռշտունին խոսում է պրոֆ. Եսայանի տեսակետի մասին, նա արձա- նագրում է. «Մեզ համար ուղադրության արժանին բերված ցիտատում այն է, որ այդտեղ նշվում է Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու մո- մենտին ֆեոդալական հարաբերությունների առկայության անկասկածելի իրո- դությունը»⁵։ Հարկավ, հաղիվ թե մեր օրերում մի պատմաբան լինի, որ առարկի այդ գրույթի դեմ։ Բայց ներկա դեպքում կարևորն այն է, որ պրոֆ. Ռշտունու կոնցեպցիայով ստացվում է, թե մեր երկրում «ֆեոդալական հարաբերությու- նների առկայության անկասկածելի իրողության» պայմաններում գոյություն

¹ Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հատ. III, մ. 2, էջ 329։

² «Պատմա-բանասիրական հանդես», 1938, № 2, էջ 29 (ընդգծումը մերն է—Ս. Մ.)։

³ Նույն տեղում, էջ 15, 16, 17։

⁴ Նույն տեղում, էջ 17 (ընդգծումը մերն է—Ս. Մ.)։

⁵ Նույն տեղում, էջ 19։

ունենր ոչ թե «ճորտատիրական հարաբերությունների բացարձակ տիրադեմություն», այլ «ճորտատիրական հարաբերությունների տարրեր»:

Այսպիսով, մեր առաջ երևա հարց է ծառանում, որոնց պարզ ու որոշակի պատկերացումը հրամայողական պահանջ է հանդիսանում:

ա) Նուրտալին իրավունքի առկայության դեպքում «անհրաժեշտ են անձնական կախման հարաբերություններ, անձնական անազատություն, ինչ աստիճանի էլ որ լինի, և հողից իրեն սրան պատկանելիք, շղթայվածի ճորտային հպատակություն (Horigkeit) իսկական իմաստով»¹: ճորտային իրավունքն ամենից առաջ իրավական կատեգորիա է, այդ պատճառով էլ կոչվում է ճորտային իրավունք: Ընկ. Ռշտունին արձանագրում է այն փաստը, որ «Արևելյան լայնաստանում գոյություն չունեին պուղագիներին հողին ամրացնելու օրենսդրական ակտեր, ուրիշ խոսքով իրավական ձևակերպման չէր ենթարկված հողին ամրացնելը»²: Հենց այս մեջբերումը պարզ ասպացույց է, որ ինչքան էլ նա համոզված կերպով վիճելիս լինի մինչև ռուսացիոն հեղինակների կարծիքների դեմ, ինքն այդ հարցում հենց նույն տեսակետն է պաշտպանում, ինչ որ, օրինակ, Ս. Ղորղանյանը, քանի որ «Անդրկովկասում չի եղել ստրկական իրավունք» և «իրավական ձևակերպման չէր ենթարկված հողին ամրացնելը» դարձվածքների միջև ըստ էության տարբերություն չկա. երկու դեպքումն էլ արձանագրվում է, որ ճորտային իրավունքի հիմնական հատկանիշը՝ հողին ամրացնելը բացակայում էր: Բայց այստեղ Ռշտունին մեր դեմ կարող է մի շատ ծանրակշիռ առարկություն առնել: Նա լիովին համաձայն է նախանի կարծիքի հետ, որ «մուլքադարական գյուղացիներն իրենց դրուժյամբ ոչնչով չէին տարբերվում ճորտ գյուղացիներից»³: Բայց հարց է ծագում, իսկ ոչ-մուլքադարական, արքունի գյուղացիների դրուժյունը (խոսքը տնտեսական դրուժյան մասին է) որևէ բանով տարբերվում էր ճորտերի դրուժյունից: Բավական է ծանոթանալ Հաքստհաուզենի հաղորդածի հետ, որը ասնամբ ըր տեսածի և է. Արուվյանից ստացած տեղեկությունների ամփոփումն է, ապա նաև կարգալի Ս. Թադիագյանցի նկարագրությունը Ադրաշ ոչ-մուլքադարական գյուղի տնտեսական դրուժյան մասին, որպեսզի պարզ լինի, որ այդ տեսակետից որևէ տարբերություն չկար մուլքադարական և ոչ-մուլքադարական գյուղերի միջև: Բացի այդ, բավական է հիշել Սիլեզիայի ջուլհակների կյանքի նկարագրությունները, ինչպես և էնդելսի նկարագրած Մանչեստրի արվարձանների պրոլետարների դրուժյունը, որպեսզի պարզ լինի, որ այդ բանվորները իրենց դրուժյամբ ավելի վատթար վիճակում էին գտնվում, քան ճորտ գյուղացիները: Բայց այդ հիման վրա ոչ մի պատմաբան նրանց ճորտեր չի համարում, քանի որ հարցը վերաբերում է նրանց տնտեսական անճարակությանը, բայց ոչ թե իրավական դրուժյանը:

«Ազատ տեղափոխման իրավունքը, — դրում է պրոֆ. Ռշտունին, — փաստորեն ֆիկցիա էր իրական կյանքում կալվածատիրոջ ձեռքում եղած տնտեսական ճնշման բազմաթիվ հնարավորությունների առկայության պայմաններում»⁴: Այս հայտարարության մեջ, իհարկե, ճշմարտության մեծ բաժին կա:

¹ Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մ. 2, էջ 329:

² «Պատմա-բանասիրական հանդես», 1938, № 2, էջ 19:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 19—20:

Իսկ ճորտային իրավունքի մասին խոսելիս չի կարելի ելնել ոչ միայն տնտեսական դրությունից, այլև տնտեսական ճնշումից կամ հարկադրանքից: Ֆեոդալիզմի պայմաններում տնտեսական ճնշման ենթակա են ինչպես ճորտ, այնպես էլ «ազատ» գյուղացիները: Այստեղ հատկանշականն այն է, որ հավելյալ աշխատանքը նրանցից կարող է բաժվել միմիայն արտատնտեսական հարկադրանքով. ենչ ձև էլ սա ընդունելիս լինի «Տնտեսական սխտեմն այստեղ, — ուսուցանում է Վ. Ի. Լենինը, — ծնում է «արտատնտեսական հարկադրանք», ճորտատիրություն, իրավական կախում, իրավադրույթուն և այլն»¹: Մենք միանգամայն համամիտ ենք Գրեկովի այն կարծիքին, որ «դասակարգային հասարակության մեջ հազիվ թե դոյություն ունի տնտեսության որևէ ձև, որին ժանոթ չլինի տնտեսական հարկադրանքը»²: Չի կարելի չհամաձայնել նույն գիտնականի հետ, երբ նա գրում է. «Սակայն և՛ ազատ, և՛ կախյալ գյուղացին պահպանում է իր տնտեսական էությունը — նա միշտ արտադրամիջոցներ տիրապետող երկրագործ է»³: Այսպիսով, ոչ տնտեսական դրությունը, ոչ էլ տնտեսական հարկադրանքը հատկանշական չեն ճորտային իրավունքի համար: Իսկ արտատնտեսական հարկադրանքը որոշիչ է ոչ միայն հողին ամրացված լինելու վիճակի, այլև մնացած այլ կարգի կախյալ վիճակների համար:

Բ) «Ճորտատիրություն» տերմինը սովորաբար գործածվում է ճորտատիրական հարաբերություններ իմաստով և մեզ մոտ այդ այլ բան չի նշանակում, քան ուսերեն «крепостничество» արտահայտության հայերեն թարգմանությունը: Որ ընկ. Ռշտունին այդ տերմինը հենց այդ իմաստով է գործածում, երևում է նրա հոգիվածի ուսերեն ամփոփումից, որտեղ ասված է. «можно говорить о существовании там только многих элементов крепостничества, но не о закрепощении крестьянства»⁴:

Բայց թե ի՞նչ բովանդակություն է հաղորդում ընկ. Ռշտունին ուսերեն «крепостничество», կամ հայերեն ճորտատիրություն տերմինին, — այդ հանգամանքը մեզ համար լիովին պարզ չէ: Մեր կարծիքով крепостничество տերմինը նույն նշանակությունն ունի, ինչ որ ֆեոդալիզմ տերմինը: Գոնե ուսական մարքսիստական գրականության տվյալներից այդ եզրակացության պետք է գալ: Մենք այստեղ կրեքենք Վ. Ի. Լենինի բաղմաթիվ արտահայտություններից մի քանիսը: Օրինակ, Լենինը գրում է. «հիշյալ գաղափարն արտահայտում է պայքար ֆեոդալական, ճորտատիրական անհավասարության դեմ»⁵, «ճորտատիրական հասարակությունը ներկայացնում էր դասակարգերի այնպիսի բաժանում, երբ հսկայական մեծամասնությունը — ճորտ գյուղացիությունը — լիովին կախված էր չնչին փոքրամասնությունից՝ կալվածատերերից, որոնք տիրում էին հողը»⁶, «երբ տապալվեց ճորտատիրությունը և լույս աշխարհ կալվ «ազատ» կապիտալիստական հասարակությունը...», «փոթորկալի ուսուցիչները... ուղեկցում էին ֆեոդալիզմի, ճորտատիրության անկումը»⁸:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 87:

² Б. Л. Греков, Киевская Русь, изд. III, 1939, էջ 119:

³ Նույն տեղում, էջ 126:

⁴ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 38:

⁵ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 296:

⁶ Նույն տեղում, հատ. 29, էջ 595:

⁷ Նույն տեղում, հատ. 19, էջ 8:

⁸ Նույն տեղում, էջ 9:

գ) Այս երկու բացատրությունից հետո մենք կարող ենք անդրադառնալ պրոֆ. Ռշտունու հիմնական թեզին: Առարկություն չի վերցնում նրա այն դրույթը, որ «Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու մոմենտին (մենք կալեկացնենք, ինչպես և դրանից շատ առաջ—Ս. Մ.) ֆեոդալական հարաբերությունների առկայությունը անկասկածելի իրողություն է»: Մյուս կողմից, ինչպես տեսանք, ընկ. Ռշտունին ընդունում է, որ մեր երկրում, չնայած գյուղացին իրավականորեն ամրացած չէր հողին, բայց առկա էին «ճորտատիրության բաղմամբիլ տարրեր»: Գրականության մեջ շատ հաճախ հանդիպում ենք ամենքին քաջ հայտնի հետևյալ կարգի դարձվածքների՝ «ճորտատիրության մնացուկներ», «ֆեոդալիզմի վերապրուկներ», «ֆեոդալա-ճորտատիրական հարաբերությունների տարրեր» և այլն, և այլն: Աներկբայելի է, որ այդ կարգի արտահայտությունները վերաբերում են ոչ թե ճորտությանը, ոչ թե ճորտային վիճակին, այլ ճորտատիրական (ֆեոդալական) սխտեմին: Եթե պրոֆ. Ռշտունին այս՝ ամենքի կողմից ընդունված առումով է զործածում «ճորտատիրության տարրերի» մասին իր արտահայտությունը, ապա, մեր կարծիքով, դա պարզապես իմաստազուրկ է: Չի կարելի մի կողմից հասարակարգը համարել ֆեոդալական, մյուս կողմից դտնել, որ ֆեոդալական հարաբերությունները պայմաններում «առկա են ճորտատիրության բաղմամբիլ տարրեր», եթե հետևելով Վ. Ի. Լենինին, ճորտատիրությունը հասկանում ենք որպես ֆեոդալիզմ: Ճորտատիրության տարրեր կարող են լինել ոչ-ճորտատիրական, ոչ ֆեոդալական հասարակության մեջ: Ասենք, օրինակ, ստրկատիրության վերջին շրջանում առաջ էին եկել ճորտատիրական հարաբերությունների շատ տարրեր, կամ կապիտալիզմի զարգացման ընթացքում ֆեոդալիզմի, ճորտատիրության շատ տարրեր պահպանում էին իրենց գոյությունը: Սրանք այնպիսի հանրահայտ դրույթներ են, որոնց դեմ հազիվ թե կարելի լինի առարկել: Բայց որ հասարակությունը բուրժուական լինի և խոսվի կապիտալիստական տարրերի առկայության մասին կամ ֆեոդալիզմի պայմաններում լրջորեն առաջ քաշվի ճորտատիրական բաղմամբիլ տարրերի մասին մի տեսություն,— այդ ոչ պատմական տվյալների, ոչ տրամաբանության հետ հաշտվել չի կարող, քանի որ երբ հասարակությունն ինքը ամբողջությամբ առած ֆեոդալական է, էլ ի՞նչ խոսք կարող է լինել ճորտատիրության առերեսը մասին:

Բայց բացառված չէ այն հանգամանքը, որ մեզ կարող են առարկել, թե պրոֆ. Ռշտունին ճորտատիրություն (крепостничество) ասելով նկատի ունի ճորտությունը (крепостное состояние), այսինքն՝ առկա է այդ տերմինի մի այլ առումը: Մեր կարծիքով, այդ դեպքում ես ընկ. Ռշտունու «բաղմամբիլ տարրերի» տեսությունը ճիշտ չէ: Գասկածից վեր է, որ ճորտությունը արտահայտվում էր ճորտային իրավունքով: Ոչ այն է, այդ իրավունքի հիմնական հատկանիշը հողին ամրացած լինելու հանգամանքն էր, բայց դրան զուգընթաց գոյություն ունեին նաև մի շարք այլ հատկանիշներ: Կլասիկ ճորտատիրության պայմաններում, առանձնապես գյուղացիության այսպես կոչված կրկնա-ճորտացումից հետո, XVI—XVII դդ., հողին ամրացումն ուղեկցվում էր անմիջականորեն դրանից բխող մի շարք երևույթներով: Այսպես՝ ճորտ գյուղացիները իրավունք չունեին ոչ վաճառել, ոչ օտարել իրենց կողմից օգտագործվող հողերը. բահրատվությունը և կոտորային աշխատանքը որևէ կերպ սահմանափակված չէին և բացառապես կախված էին կալվածատիրոջ քահանայությանից. գյուղացիները զրկված էին տեղափոխվելու իրավունքից. նրանք ենթակա էին

իրենց կալվածատիրոջ դատաստանին և ոստիկանական հսկողությանը և այլն: Այս երևույթները բացակայում էին այն վայրերում, որտեղ առկա էր հողի ֆեոդալական սեփականություն, բայց գյուղացիությունը ամրացված չէր հողին և իշխում էր չինչային իրավունքը: Հետևաբար, այդ երևույթները սերտ կերպով կապված էին ճորտական իրավունքի հետ: Իսկ եթե, հետևելով Վ. Ի. Լենինին, մենք ընդունում ենք, որ ճորտային իրավունքի հիմնական հատկանիշը հողին ամրացված լինելն է, ապա պետք է ընդունենք նաև, որ վերոհիշյալ երևույթները սերտորեն կապված են հողին ամրացած լինելու հանգամանքի հետ. ուստի չի կարելի հիմնական հատկանիշը բացասել, իսկ մյուս հատկանիշները համարել գոյություն չունեցող երևույթի տարրեր և դրանք ընդունել: Նրկուսից մեկը. կամ մեր երկրում գոյություն ունեւ ճորտային իրավունք, և այդ դեպքում պետք է ընդունել, որ գյուղացին ամրացված էր հողին և, հետևաբար, անսպաժանորեն առկա պետք է լինեին այդ հիմնական հատկանիշին ուղեկցող վերոհիշյալ հանգամանքները, կամ՝ ճորտային իրավունք գոյություն չունեւ և, բնականաբար, դրան ուղեկցող հանգամանքներն էլ գոյություն ունենալ չէին կարող:

Մենք մեր պրպտումների ընթացքում հանգել ենք երկրորդ եզրակացությանը: Այս դեպքում մի շատ օրինական հարց է ծագում. եթե մեր երկրի գյուղացին հողին ամրացած չէր, ազատ կերպով կարող էր իր տրամադրության տակ եղած հողն օտարել նույնիսկ նույն գյուղի մուլքադարին, եթե մուլքադարը իրավասու չէր փոխել ռենտայի ձևը կամ քանակը, եթե գյուղացին ենթակա չէր կալվածատիրոջ դատաստանին և չէր գտնվում նրա ոստիկանական հսկողության ներքո, — ապա այս ամենը չի՞ նշանակում, որ մեր երկրի գյուղացին բացարձակապես ազատ շինական էր:

Ոչ, այդ չի նշանակում:

Մեր երկրի գյուղացին, թե՛ մուլքադարական, թե՛ արքունի, հավասարապես գտնվում էր կախյալ վիճակում: Մեր կարծիքով, մեր հետադոտողները սխալմամբ նույնացնում են ճորտական վիճակ և կախյալ վիճակ հասկացողությունները և դա է պատճառը, որ «ճորտությունը, ակադ. Մանանդյանի բառերով ասած, — դառնում է ճապաղ ու առաձգական գաղափար»:

Ֆեոդալիզմի պայմաններում գյուղացու ամրացումը հողին պարտադիր չէ, նույնիսկ կլասիկ ֆեոդալիզմի երկրներում, բայց կախյալ վիճակը պարտադիր է ամեն մի ֆեոդալական երկրում: Ինչպես վերը նշեցինք, էնգելսի վկայությամբ, եթե և վրոպական ֆեոդալիզմի սկզբնական շրջանում ճորտությունն իր մեջ պարունակում էր ստրկության շատ գծեր, ապա հետագայում նա արդեն մոտենում էր հասարակ կախվածության: Գյուղացիները, ասում է էնգելսը, «ամբողջ Հյուսիսային Գերմանիայում, շարունակելով կալվածատերերի նկատմամբ կատարել իրենց պարտավորությունները, սակայն, ստացան անձնական ադատություն»¹: Ուրեմն, ինչպես ճորտությունն է տարբեր ստրկությունից, այնպես էլ նա տարբեր է կախյալ վիճակից: Արևմտյան Նվրոպայի երկրների մեծ մասում XIV դարին մոտ ճորտային իրավունքը գրեթե վերացել էր: XVI դարից այդ իրավունքը նորից սկսում է կիրառվել ավելի բիրտ ձևով, հատկապես Նվրոպայի արևելյան երկրներում: Սակայն նույն ճորտային իրավունքի վերացած լինելու ժամանակ էլ ճորտատիրական հարաբերությունները մնում

¹ К. Маркс и Ф. Энгельс, т. XV, էջ 640—641:

էին որպէս այդ գյուղացիութեան կախյալ վիճակ՝ հողի սեփականատիրոջից, ընդ որում, այդ կախումը չի դիտվում բոլոր դեպքերում որպէս միատեսակ երևոյթ, մի տեղ նա կարող է հանդես գալ որպէս ճորտութիւն, մի այլ տեղ ոչ-լիիրավահաւասարութիւն: Եթէ, օրինակ, տվյալ երկրում առկա է հողին ամրացումը, ինքնին հասկանալի է, որ առկա է նաև գյուղացու իրավական կախումը կալվածատիրոջից, բայց եթէ առկա է իրավական կախումը, այդ պէս չի նշանակում, թէ առկա է նաև ճորտութիւնը: Այս վերջինը կախյալ վիճակի միայն մի տեսակն է: Ոչ-ճորտական կախյալ վիճակի օրինակ կարող են ծառայել ֆրանսիական «ցենզիվիկները», Կիւյան Ռոսիայի «չակուպները» կամ XVI դ. Մոսկովյան Ռուսիայի «кабацные холопы»-ները: Ռուսական գյուղացիութեան պատմութեան խոշոր մասնագետներից մեկը՝ ակադեմիկոս Գրեկովը «չակուպներին» մասին գրում է. «Զակուպը ֆեոդալից կախումն ունեցող մարդ է: Գախյալ վիճակը հաստատվում է տիրոջ կողմից փողի որոշ գումար տալու ակտով. եթէ զակուպը ցանկանաւ իր տիրոջից հեռանալ, գումարը պետք է վերադարձնէր: Զակուպի կախյալ վիճակը ժամկետային էր»¹: Հետևաբար, закупничество-ն պարտային կալվածութիւն էր, բայց հողին ամրացում, ճորտութիւն չէր: Նույն դիտեմքներ այդ նույն հարցը պարզարանում է էլ ավելի որոշակի: Իրենց իրավական հատկանիշներով «գյուղացիները կարող էին լինել կամ ազատ հողագործներ կամ ինչպէս աշխարհիկ, այնպէս էլ եկեղեցական հողատերերից դանազան աստիճանի ու ձևի կախման մեջ: Հասարակութեան ֆեոդալականացման շրջանում գյուղացիութեան իրավական բախար ընդհանուր տենդենցը ազատ լինելուց նրա ենթակա դառնալն է. նա դառնում է բահրա վճարող, կոո բաշող, կամ նույնիսկ դառնում է ճորտ»: «Ամենեին էլ պարտադիր չէ, որ կախման բնույթը բոլոր դեպքերում միատեսակ լինի»²: Իհարկէ, եթէ գյուղացին ճորտ է, ապա դրանից բխում է, որ նա կամ բահրատու է, կամ կոովոր. բայց եթէ նա բահրատու է, ապա դրանից չի բխում, որ նա անպայման ճորտ է: Գրեկովի բացատրութիւնից երևում է, որ բոլոր դեպքերում ֆեոդալական գյուղացին կախյալ վիճակումն է հողի սեփականատիրոջից:

Մուրադարի իրավունքը մուլքադարական գյուղի նկատմամբ արտահայտվում էր լոկ հարկ-ոնենտայի մի մասն ստանալու իրավունքով: Այդպէսով միայն գյուղացին կախում ուներ ֆեոդալից: Մնացած հարցերում մեր երկրի գյուղացիութիւնն անսպառնալի վիճակում էր, որ «կարիք չկա, որ կախման հարաբերութիւնը թէ քաղաքականորեն ու թէ տնտեսապէս ավելի խիստ ձև ունենա, քան այն, որ առհասարակ բոլոր հպատակներն ունեն այս պետութեան վերաբերմամբ» (Մարքս): Մեր երկրի մուրադարական գյուղերի գյուղացիները «ազատ կերպով կարող էին ամեն հանապարհով ատարել իրենց օգտագործման ներքե գտնվող հողերը, ինչպէս և ձեռք բերել հողեր, հարկավ, այն պարտավորութեան հետ միասին, որ ընկնում էր հողի վրա: Բահրատվութիւնը միանգամայն սահմանափակված էր, և կալվածատերը իրավագոր չէր բահրայի իր մա-

¹ Վ. Գ. Գրեկով, Նշվ. աշխ., էջ 123:

² Նույն տեղում, էջ 126—127:

³ Շոպենի վկայութեամբ, վերջին սարգարի ժամանակ մուրադարներն իրենց պատկանող տասանորդն անմիջականորեն գյուղից չէին ստանում. ամբողջ հարկ-ոնենտան հավարժում էր սարգարական շտեմարանները. իսկ այդպէսից մուլքադարներն ստանում էին իրենց հասանելի մասը:

սի քանակը ո՛չ ավելացնել և ո՛չ էլ ձեափոխել, օրինակ, բնատուրքային ունեւտան դարձնել աշխատաւճար: Մեր երկրի գյուղացիները զրկւած չէին ոչ տեղափոխուելու, ոչ էլ աշխատանքը փոխելու իրավունքից, նման հարցերում մուրազարը միջամտելու իրավունքից զուրկ էր. նրանք ենթակա չէին մուրազարի ոչ դատաստանին, ոչ էլ ոստիկանության հսկողութեանը, մեր երկրի ինչպես գյուղացին, այնպես էլ գյուղական համայնքը կարող էին զիմել պաշտոնական պատարանին (շարիաթին) նրանց և մուրազարի միջև վեճ ծագելու դեպքում և այլն, և այլն: Այս բոլորից մենք եզրակացնում ենք, որ մեր երկրի մուրազարական գյուղի գյուղացին ենթակա չէր «ճորտային իրավունքի» ներգործութեանը: Մյուս կողմից, մեր երկրի գյուղացին կախյալ վիճակում էր, բայց ոչ թիկալածատիրոջից, այլ պետական ապարատի ներկայացուցչից: Մեզ մոտ ևս իրավականորեն կախյալ վիճակը, վերջին հաշիւով, հանդես էր գալիս հողի սեփականատիրոջ հանդեպ, բայց քանի որ հողի սեփականութեան իրավունքը այդ ժամանակ զոգւած էր սուլթանի տետի հետ, այդ պատճառով էլ կախյալ վիճակն ընդունել էր պետական ապարատից կախւած լինելու բնույթ:

Այսպիսով, մեր կարծիքով, Արևելյան Հայաստանում փոստաստանին միանալու նախօրյակին իշխում էին միանգամայն զարդացած ու հասուն ճորտատիրական հարարերութեաններ, որոնք հատուկ են ամեն մի ֆեոդալական երկրի, երբ հիմնական տնտեսական օրէնքը ֆեոդալական սենտայի առկայութեանն է: Բայց որովհետեւ մեր երկրում հողի սեփականութեանը կենտրոնացած, համապետական բնույթ ունեւր, ուստի և ունեւտան, որպես հողի սեփականութեան իրավունքի տնտեսական ուղիղացիա, ընդունել էր հարկ-ունեւտայի բնույթ, իսկ ճորտութեան՝ իրեն հողին ամրացման ինստիտուտի բացակայութեանը անմիջական հետեւանք էր հողի մասնաւոր սեփականութեան բացակայութեան: Գյուղացին կախյալ վիճակում էր պետական ապարատի նկատմամբ: Ուրեմն մեր երկրի այդ ժամանակվա ֆեոդալիզմի առանձնահատկութեանը «հողի մասնաւոր սեփականութեան բացակայութեանն է» (Մարքս), իսկ ճորտական իրավունքի բացակայութեանը՝ այդ հիմնական հատկանիշի անմիջական հետեւանքը:

К ВОПРОСУ О ЗЕМЛЕВЛАДЕНИИ И КРЕПОСТНИЧЕСТВЕ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ЕЕ ПРИСОЕДИНЕНИЯ К РОССИИ

С. С. МАРКОСЯН

(Р е з ю м е)

В статье подчеркивается, что феодально-крепостнические отношения в Восточной Армении накануне ее присоединения к России основывались на государственной феодальной собственности на землю. Между тем ряд авторов (Б. М. Арутюнян, А. М. Есаян, И. П. Петрушевский, В. А. Рштуни и др.) считает, мульковые и тиульные деревни помещичьей частновладельческой собственностью. Для доказательства своего тезиса все они базируются на правовых отношениях, именно на праве отчуждения путем купли-продажи, дарения и наследования. Такой подход неправильный, так как основу феодальной земельной собственности, как государственной, так и частной, составляла феодальная рента.

Авторы указывают, что крестьянин мог продать, дарить и наследовать землю, но на этом основании нельзя считать его собственником земли, ибо новый владелец вместе с землей приобретал и лежащие на ней все повинности и обязанности по отношению к верховному собственнику земли.

Вопрос усложняется еще тем, что в имеющихся источниках под термином «мульк» фигурируют два различных понятия: 1) всякое недвижимое имущество и 2) десятина— $\frac{1}{10}$ часть урожая, уступленная властью частным лицам. Хотя доводы названных авторов относятся к деревне как мульку (недвижимому имуществу), однако из источников видно, что они в равной мере должны относиться и к мульку-десятине. Отсюда ясно, что право взимания десятины также отчуждалось, делилось на части и передавалось по наследству.

Мульк деревни, как и тиуль, независимо от того, какое толкование дается этому термину, в принципе не был наследственным, хотя мульк часто очень долго оставался во владении одного и того же рода или религиозной корпорации. В доказательство этого положения в статье приводятся факты, когда при воцарении нового шаха или вступлении нового мульковладельца в свои права последний просит утвердить за ним мульк села, и без того находившийся в его распоряжении и не имевший другого претендента.

В купчих, относящихся к мулькам и являющихся земельными угодиями, всегда указывались границы проданного имущества, и количественная сторона фиксировалась пространственными мерами (халвар, сомар, чван, оравар), а в купчих, относящихся к мулькам села, упоминались границы *всего села*, даже в том случае, когда отчуждалась лишь *часть мулька*; в этих купчих никогда не фигурируют пространственные меры, а лишь указываются части (данги), даже при продаже всего мулька (6 дангов). Все это становится понятным лишь в том случае, если под мульком села понимать десятину, а не земельное пространство села.

Тиуль также трактуется как разновидность землевладения, которая, будучи вначале условной, впоследствии превращается в частную собственность.

Разбирая доводы и данные, приведенные И. П. Петрушевским и др., автор статьи указывает на бездоказательность их выводов. В отношении Армении эти данные свидетельствуют лишь о том, что тиуль здесь фигурирует не иначе как рента.